

26.383

ԿՆ. ԶՎԵՍԿԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԻԱՆՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆ ԲԿՈՎԿԳՅՈՒՂԲԱՆԿԻ

Ք Ի Ֆ Լ Ի Ս — 1929 Ք

ԿՆ. ԶՎԵՍԿԻՆ

346.44/02)



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՑ ՈՒ ԳՆՏԵՍԽՆՆԵՐՈՎ



02.27.27

3 APR 2013



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

վորը հաճանությունն է ստացել վորպես որինակելի
ԱՍՏԵՆՀ համար



42779.67

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչն է կոչվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերության կանոնադրություն:

Կանոնադրություն է կոչվում զրավոր կամ տպագրված ձևով շարադրված այն հիմնական կանոնները, վորոնցով ընկերությունը պետք է ղեկավարվի իր գործունեության ընթացքում:

Սահմանված կարգով գրանցված կանոնադրությունը վորոշում է ընկերության՝ վորպես իրավաբանորեն ձևակերպած կազմակերպության՝ գոյությունը:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունը կարող է արդյոք գոյություն ունենալ առանց կանոնադրության:

Վոչ, չի կարող: Խորհրդային Միության մեջ յուրաքանչյուր կոոպերատիվ կազմակերպություն պիտի ունենա իր կանոնադրությունը:

Ո՞վ է մշակում Գյուղատնտեսական Վարկային Ընկերության կանոնադրությունը:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունների հիմնարկների պարտականությունն է իրենց նախաձեռնությամբ կազմակերպելիք վարկային կոոպերատիվի համար կանոնադրություն մշակել:

Ի՞նչպես է մշակվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերության կանոնադրությունը:

Կազմակերպելիք Գյուղատնտեսական Վարկային Ընկերության հիմնադիրների համար կանոնադրության մշակելը հեշտացնելու համար, Կենտրոնական Գյուղատնտեսական Բանկը, Գյուղատնտեսական Կոոպերացիայի Միությունների Միության հետ միասին (ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիտեյների Խորհրդի 1927 թ. հունվարի 18-ի «Կոոպերատիվ վարկի մասին» յեղած վորոշման հիման վրա) կազմել են Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունների համար տիպիկ կանոնադրություն:

Դաշնակից հանրապետութիւնները, տիպիկ կանոնադրութեան հիման վրա, Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնների համար մշակում են որինակելի կանոնադրութիւն, համաձայնեցնելով այս այն որենքներին, վորոնք հրատարակված են ամբողջ ԽՍՀ Միութեան և այն հանրապետութեան համար, վորտեղ հիմնվում է ընկերութիւնը:

Գյուղատնտեսական Վարկային ընկերութիւնների համար ՌՍՖՍՀ մեջ մշակվել է որինակելի կանոնադրութիւն, վորին հավանութիւն է տվել Ֆինստողկոմատը, Արդժողկոմատը, Լուստողկոմատը, Ռուսական Գյուղատնտեսական Բանկը և Գյուղատնտեսական Կոոպերացիայի Միութիւնների Միութիւնը:

Պարտավորեցուցի՞չ է արդո՞ք որինակելի կանոնադրութիւնը գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնների հիմնադիրների համար:

Վոչ, որինակելի կանոնադրութիւնը հիմնադիրների համար պարտավորեցուցիչ չէ: Նա միայն վորպես որինակ է ծառայում: Սակայն այնքան, վորքան այդ որինակելի կանոնադրութեանը հավանութիւն է տվել Ֆինստողկոմատը, վորի տեղական որգանները գրանցում են այդ կանոնադրութիւնը և հսկում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնների գործունեութեան վրա, ապա այն պիտի ընդունել վորպես հիմք և նրա մեջ մտցնել միայն այն փոփոխութիւններն ու լրացումները, վորպիսիք տեղական պայմաններին ու առանձնահատկութիւններին համապատասխան՝ անհրաժեշտ կհամարվեն: Այդ փոփոխութիւններն ու լրացումները պիտի համաձայնեցվեն 1927 թ. հունվարի 18-ին «Կոոպերատիվ վարկի մասին» հրատարակված որենքի հետ, նաև այն դաշնակից հանրապետութեան համապատասխան վորոշումների հետ, վորտեղ հիմնվում է ընկերութիւնը:

Ի՞նչ պիտի ցույց տրված լինի Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան կանոնադրութեան մեջ:

Յուրաքանչյուր Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան կանոնադրութեան մեջ պիտի ցույց տրված լինի. — Ընկերութեան անունը, նրա գործունեութեան շրջանը, վարչութեան կենտրոնավայրը, կազմակերպութեան նպատակը և Ընկերութեան գործունեութեան կարգը, անդամների Ընկերութեան մեջ մտնելու, դուրս գալու և նրանից հեռացվելու պայմանները, անդամների պատասխանատվութիւնը Ընկերութեան պարտավորութիւնների վերաբերմամբ, դրամագլուխներ կազմելու պայմաններն ու կարգը

փայտվճարի և մուտքի վճարի չափը, այլ պարտադիր մուծումների սահմանային չափը, հաշվետվութիւններ կազմելու, ստուգելու և հաստատելու կարգն ու ժամկետը, շահույթների և վնասների բաշխման կարգը, ընդհանուր ժողովներ հրավիրելու կարգը ու ժամկետը և նրանց աշխատանքների կարգը, վարչութեան, վերաստուգիչ հանձնաժողովի և խորհրդի իրավասութեան սահմանները, նշված մարմիններից յուրաքանչյուրի անդամների թիվը, նրանց ընտրութեան կարգն ու լիազորութեան ժամկետը, Ընկերութեան լուծարքի պայմաններն ու կարգը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդվ. 1.—Ի՞նչ է ցույց տրվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերության կանոնադրության 1-ին հոդվածում:

Առաջին հոդվածում նշվում է հիմնվող Ընկերության լրիվ անունը: Ընկերությունն անվանվում է այս կամ այն վայրի անունով, վորտեղ նա հիմնվում է, որինակ՝ «Բուլխի Գյուղատնտեսական Վարկային Ընկերություն» (վոր գտնվում է Բուլխի գյուղում), կամ քաղաքական, կամ կոպերատիվ կամ գյուղատնտեսական նշանակություն ունեցող վորևե հավելումով, որինակ՝ «Իվանովոյի Գյուղատնտեսական Վարկային Ընկերություն Վ. Ի. Լենինի անվան», Սիմիոնովոյի «Կարմիր Ռանչպար» Գյուղատնտեսական Վարկային Ընկերություն և այլն:

Հոդվ. 2.—Ի՞նչ պիտի ցույց տրված լինի կանոնադրության մեջ՝ Ընկերության գործունեության շրջանի և Վարչության կենտրոնավայրի մասին:

Կանոնադրության յերկրորդ հոդվածում նշվում է այն շրջանը կամ վիճակը, վորին Ընկերությունը պետք է սպասարկի: Այն դեպքերում, յերբ Ընկերությունը սպասարկելու յե շրջանի կամ վիճակի մի մասին, սպա մատնանշվում են այն բոլոր բնակեցված կետերը, վորոնց սպասարկելու է Ընկերությունը:

Բացի դրանից, այս հոդվածում մատնանշվում է Ընկերության վարչության կենտրոնավայրը և նրա մանրամասն հասցեն:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերության գործունեության հասար ի՞նչպիսի շրջանն է ավելի համապատասխան համարվում:

Ընկերության գործունեության շրջանը ամենից լավ է սահմանել այն հաշվով, վորպեսզի Ընկերությունն ընդգրկի վոչ ավել, քան 1¹/₂—2 հազար ծուխ:

Չափազանց մեծ շրջանն Ընկերության վարչությանը խանգարում է լավ ճանաչել ընկերության յուրաքանչյուր անդամի տնտեսությունը և ճշգրիտ հետևել փոխադրական աշխատանք-

ներին, իսկ չափազանց փոքր շրջանում Ընկերությունը չի կարող արգարացնել իր վերադիր ծախսերը:

Ընկերության վարչության կենտրոնավայր պիտի դարձնել շրջանի տնտեսական (և ըստ հնարավորին նաև վարչական) կենտրոնը:

Հոդվ. 3.—Ի՞նչ նպատակով է հիմնվում Գյուղատնտեսական վարկային ընկերությունը:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունը հիմնվում է դրամական վարկավորման միջոցով իր անդամներին՝ արտադրական կարիքներն սպասարկելու և նրանց դրամական խնայողություններին կուտակումը հեշտացնելու նպատակով: Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունն իր այդ բոլոր աշխատանքները պիտի տանի գյուղացիական շքավորական-միջակ խավերի ու նրանց արտադրական միությունների (կուտնտեսություններ, արտելներ և այլն) շահերը պաշտպանելու ուղղությամբ:

Բացի այդ հիմնական նպատկից, ել ի՞նչպիսի լրացուցիչ նպատակների յե յետապնդում Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունը:

Բացի վերոհիշյալ աշխատանքներից—փոխատվություններ տալուց և ավանդներ ընդունելուց—Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունն իրեն նպատակ է դնում կազմակերպել իր անդամների աշխատավորական տնտեսությունների արտադրանքի իրացումը, կազմակերպել և նրանց անհրաժեշտ գործիքներ, նյութեր և արտադրության այլ միջոցներ մատակարարել: Բացի այդ Ընկերության նպատակն է հանդիսանում կազմակերպել այդ ոպերացիաներին հետ կապված արտադրական (արդյունաբերական և գյուղատնտեսական) ձեռնարկումներ և իրականացնել այլ՝ գյուղական տնտեսության ու գյուղական արհեստագործության բարելավմանը նպաստող՝ տնտեսական, ագրի-կուլտուր ու կրթական ձեռնարկումներ:

Հոդվ. 4.—Գյուղատնտեսական վարկային Ընկերությունն ի՞նչպես պիտի վարի իր աշխատանքները:

Ի՞նչպես Գյուղատնտեսական կոպերատիվ կազմակերպությունների մյուս բոլոր տեսակները, նույնպես և Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունը ձգտում է բարձրացնել գյուղացիական աշխատավոր մասսաների գյուղատնտեսությունը և նրանց սոցիալիստական շինարարությունը մասնակից դարձնել:

Այս ուղղութեամբ Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնը պիտի աջակցի գոյուղատնտեսութեանը կողմնակալ (միացյալ) ձեւերի առաջացմանն ու զարգացմանը, մեկտրացիայի միջոցով հողագործութեան համար պիտանի հողերի բարելավմանն ու ընդարձակմանը: Նույնպէս և նա պետք է աջակցի, վոր գյուղատնտեսութեան մեջ մեքենաներ և արտադրութեան բարելավված ձեւեր կիրառվեն, ազգաբնակչութեան մեջ լայն կերպով տարածվեն գյուղատնտեսութեան և կոոպերացիայի վերաբերող գիտելիքներ:

Հոդ. 5.—Ի՞նչով իրավունք ունի զբաղվելու Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնը, վորպեսզի հասնի վերոհիշյալ նպատակներին:

Կանոնադրութեան համապատասխան հատվածներում զբաղված կանոնները պահպանելով, Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւններ իրավունք ունին.— ավանդներ ընդունել և փոխառութիւններ կնքել, փոխառութիւններ տալ, պարտավորակներ և այլ պարտավորագրեր զեղջել, վճարման հանձնարարութիւններ ընդունել և զբաղական գումարներ փոխադրել, արժեթղթեր գնել, վաճառել և պահել՝ ինչպէս իր հաշիվով, նույնպէս և կոմիսսիոն հիմունքներով առևտրական գործառքներ կատարել, արտադրական (արդյունաբերական և գյուղատնտեսական) ձեռնարկութիւններ կազմակերպել, գյուղատնտեսութեանը ելքտրոֆիկացիայի և մեկտրացիայի (վոռոգում, ձահիճների ցամաքեցում և ընդհանրապէս հողերի բարելավում) ուղղութեամբ ձեռնարկութիւններ կազմակերպել, կանոնադրութեան մեջ հիշված կանոնների հիման վրա Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան հիմնական աշխատանքներին համապատասխանող այլ ձեռնարկումներ կազմակերպել:

Հոդ. 6.—Կարող է արդյոք Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնը, վորպէս անդամ կամ փայտտեր մտնել Կոոպերատիվ Միութիւնների կամ այլ կազմակերպութիւնների մեջ:

Կարող է, սակայն, Ընկերութեան ընդհանուր ժողովի վորոշմամբ միայն, և այն ել այնպիսի Կոոպերատիվ Միութիւնների ու կազմակերպութիւնների մեջ, վորոնց նպատակը համապատասխանում է Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան նպատակներին:

Նման միութիւններին ու կազմակերպութիւններին մասնակցելու համար Ընկերութիւնն իր միջոցներից վորբա՞ն կարող է տրամադրել:

Այդպիսի մասնակցութեան համար Ընկերութիւնը կարող է ծախսել իր հիմնական դրամագլխի 25 տոկոսից վոր ավելին, չհաշվելով նրա փոխառվական մասը:

Կարո՞ղ է արդյոք Ընկերութիւնը վերոհիշյալ քանակութիւնից ավելի չափով ծախսել ընկերութիւններին ու կազմակերպութիւններին մասնակցելու համար:

Կարող է, սակայն ի հաշիվ հատուկ կապիտալի միայն, վոր կազմվում է այդ նպատակի համար շահույթներից հատկացված մասհանումներից և Ընկերութեան անդամների հատուկ մուծումներից:

Հոդվ. 7.—Ի՞նչ իրավունքներով է ոգտվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնը:

Սահմանված կարգով զբանցված Ընկերութիւնը ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով (այսինքն՝ հիմնարկութեան իրավունքներով) և կարող է ըստ կանոնադրութեամբ նախատեսված նպատակներին և գոյութիւն ունեցող որեւորեւորութիւնների համաձայն գույք գնել ու վաճառել (ոտարացնել), պայմանագրեր ու գործարքներ կնքել, իր վրա պարտավորութիւններ վերցնել, նվերներ ընդունել, դատական հիմնարկութիւններում հայց հարուցել և հայցերի վերաբերմամբ պատասխանել:

Հոդվ. 8.—Կարո՞ղ է արդյոք Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնն ունենալ իր կնիքը:

Ընկերութիւնը վոր միայն կարող է, այլ և պարտավոր է կնիք ունենալ՝ իր անվան մակագրութեամբ:

Հոդվ. 9.—Իր պարտավորութիւնների վերաբերմամբ Գյուղատնտեսական Վարկային Ընկերութիւնն ի՞նչով է պատասխանատու:

Իր պարտավորութիւնների վերաբերմամբ Ընկերութիւնը պատասխանատու չէ իր ամբողջ գույքով:

Իսկ ընկերութեան գույքի անբավարար լինելու դեպքում ի՞նչով են ապահովվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան պարտավորութիւնները:

Ընկերութեան պարտատերերին բավարարելու համար, յերանրա գույքը չի բավարարում, ապա՞ Ընկերութեան լուծարքի դեպքում նրա անդամները, կանոնադրութեան համաձայն, կրում են լրացուցիչ պատասխանատվութիւն:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդվ. 10.—Ո՞վ կարող է լինել Գյուղատնտեսական Վարկային ընկերության անդամ:

Ընկերության անդամներ կարող են լինել.—

ա) Այն անձինք, վորոնք Ընկերության գործունեության շրջանում գյուղատնտեսությանը կամ դրա հետ կապված արհեստով են զբաղվում և 16 տարեկանից փոքր չեն:

բ) Այն անձինք, վորոնք ընկերության գործունեության շրջանում հասարակագուտ աշխատանքով են զբաղված (գյուղատնտեսներ, ուսուցիչներ և այլն):

գ) Բոլոր տեսակների ստորին կոոպերատիվ կազմակերպությունները, վորոնց վարչությունները գտնվում են Ընկերության գործունեության շրջանում:

դ) Գյուղացիական փոխադարձ ոգնություն կոմիտեները, վորոնք պարապում են արտադրական գործնեությանը:

Կարո՞ղ են արդյոք գյուղատնտեսական Վարկային Ընկերության անդամ լինել այն անձինք, վորոնք ծխատեր չեն, բայց մասնակցում են գյուղական տնտեսության մեջ կամ նրա հետ կապված են վորևե զբաղմունքով (գյուղական ծխի չափահաս անդամները), ինչպես և այն անձինք, վորոնք նոր են սկսում գյուղական տնտեսության կազմակերպման:

Այո, այդպիսի անձինք կարող են Գյուղատնտեսական Վարկային Ընկերության անդամ լինել:

Ո՞վքեր են, վոր մասնակցելով գյուղական տնտեսություն վարելուն, չեն կարող Գյուղատնտեսական Վարկային Ընկերության անդամ լինել:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերության անդամ լինել չեն կարող այն անձինք, վորոնք ունեն առևտրական ձեռնարկություններ:

Կարո՞ղ են արդյոք ընկերության անդամ լինել այն անձինք, վորոնք սահմանված կարգով զրկված են խորհուրդների ընտրական իրավունքից:

Խորհուրդների ընտրական իրավունքից զրկված անձինք չեն կարող Գյուղատնտեսական Վարկային Ընկերության հիմնադիրներ լինել, սակայն արդեն կազմակերպված ընկերություններին նրանք կարող են անդամագրվել:

Կարո՞ղ են արդյոք ընկերության անդամ լինել այն անձինք, վորոնք ապրում են անաշխատ յեկամուտով և շահագործում են չքավորության:

Կարող են, սակայն Ընկերության անդամների ընդհանուր ժողովը կարող է վորոշել նրանց չնդունել Ընկերության անդամ: Թույլատրվում է արդյոք միաժամանակ լինել անդամ յերկու և ավելի գյուղատնտեսական ընկերությունների:

Վոչ, չի թույլատրվում:

Ընկերության անդամները միաժամանակ չեն կարող մի այլ վարկային-կոոպերատիվ կազմակերպության կամ փոխադարձ վարկի ընկերության անդամ լինել:

Հոդվ. 11.—Ո՞վ է ընդունում Ընկերության անդամ:

Ընկերության անդամների ընդունելությունը կատարվում է ընդհանուր ժողովում, վորը սակայն կարող է անդամների ընդունելության իրավունքը վերապահել նաև վարչությանը՝ խորհրդի հետ միասին կատարելու:

Վո՞րտեղ կարելի յե բողոքել, յերբ վարչությունը և խորհուրդը մերժում են ընկերության անդամ ընդունել:

Վարչության և Խորհրդի կողմից Ընկերության անդամ ընդունելու մերժման դեմ կարելի յե բողոքել ընդհանուր ժողովին, վորի վորոշումը վերջնական է հանդիսանում:

Հոդվ. 12.—Ի՞նչ է պահանջվում այն անձանցից, վորոնք ցանկանում են Գյուղատնտեսական վարկային ընկերության անդամ լինել:

Ընկերության անդամ լինել ցանկացող անձն այդ առթիվ Ընկերության վարչությանը ներկայացնում է գրավոր հայտարարություն և ստորագրություն է տալիս, վոր ինքն անդամ չէ մի այլ Գյուղատնտեսական Վարկային Ընկերության կամ փոխադարձ վարկային ընկերության, վոր պարտավորվում է յենթարկվել Ընկերության կանոնադրությանը սահմանված կանոններին և Ընկերության վարչիկան մարմինների որինական վորոշումներին, ինչպես նաև իր վրա պատասխանատվություն է վերցնում Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության պարտավորությունների վերաբերմամբ:

Հոդվ. 13.—Ի՞նչպիսի մուծումներ է պարտավոր անել Գյուղատնտեսական Վարկային Ընկերության մեջ մտնող յուրաքանչյուր անդամ:

Ընկերութեան մեջ մտնող յուրաքանչյուր անդամ պարտավոր է վճարել սահմանված մուտքի և փայի վճարները, ինչպես և հատուկ կապիտալի կազմակերպման համար ընդհանուր ժողովի կողմից սահմանված մուծումները, ըստ վորում ընկերութեանն անդամազբվող չքավորին, ինչպես փայավճարի, նույնպես և հատուկ կապիտալի սահմանված մուծումները կատարելու համար պիտի տարկետում տրվի:

Ի՞նչ է պարտավոր անել վարչութիւնը, յերբ ընկերութեան անդամ ցանկանում է լինել չքավորը, վորը բավարարելով անդամ լինելու համար սահմանված բոլոր կանոններին, հնարավորութիւն չունի վճարելու նույնիսկ փայի մի մասը:

Ընկերութիւնը պիտի բավարարվի այդպիսի անդամից միայն մուտքի վճար վերցնելով, մի առ ժամանակ հետաձգելով նույնիսկ փայի առաջին մասի գանձումը: Բացի դրանից, յուրաքանչյուր վարկային Ընկերութիւնն ի հաշիվ իր շահույթների և այլ աղբյուրների, պիտի կազմի «չքավորութեան կոտպերացման» հատուկ ֆոնդ:

Յեթե Ընկերութիւնն ունի այդպիսի ֆոնդ, ապա այն չքավորին, վորը բավարարում է անդամ լինելու համար սահմանված կանոններին, և վորը սակայն հնարավորութիւն չունի փայավճարը մուծելու, վարչութիւնը կարող է բաց թողնել յերկարատե, 5 տարուց վոչ պակաս անտոկոս փոխառութիւն, վորպեսզի նա գրանով վճարի Ընկերութեանը սահմանված փայը:

Կարո՞ղ է արդո՞ր ընկերութիւնը չքավորութեան կոտպերացման ֆոնդից փայավճար մուծելու համար անվերադարձ նպաստ տալ:

Բացառիկ դեպքերում, յերբ Ընկերութեան անդամ է ցանկանում լինել ընդունելութեան պայմաններին բավարարող կարմիր բանակային չքավոր այրին կամ հաշմանդամ գյուղացին,— վարչութիւնը կարող է փայավճար մուծելու համար անվերադարձ նպաստ տալ:

Հոդվ. 14.—Ո՞ւմ կողմից և յե՞րբ է սահմանվում անդամներին տրվելիք վարկի առավելագույն չափը:

Վարկի առավելագույն գումարն անհատ անդամների և կազմակերպութիւնների համար վորոշում է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը: Սովորաբար, այդ գումարի սահմաններում վարչութիւնը խորհրդի հետ միասին, Ընկերութեան անդամազբվելու դեպքում, յուրաքանչյուր առանձին անդամի համար վորոշում է վարկի առավելագույն չափը:

Այդ չափը վորոշելիս պիտի յերկետ ունենալ վոչ այնքան այս կամ այն անդամի գույքային ապահովութիւնը, վորքան նրա տնտեսարարութիւնը, վճարումներ կատարելու ճշտապահութիւնը և վարկ-ոգնութեան կարևորութիւնն ու նպատակահարմարութիւնը նրա հետագա տնտեսավարման համար: Յեւկետ ունենալով այս տեսակետը, չքավոր տնտեսութիւններին ու նրանց միութիւններին պետք է վարկ բանալ բավարար չափերով: Հոդվ. 15.—Ի՞նչ փաստաթուղթ է ստանում ընկերութեան մեջ մտնող յուրաքանչյուր անդամ:

Ընկերութեան մեջ մտնող յուրաքանչյուր անդամ ընկերութեան վարչութիւնից ստանում է անվանական հաշվեգրքույկ: Ընկերութեան վարչութիւնն ի՞նչ է պարտավոր գրելու յուրաքանչյուր անդամի հաշվային գրքույկում:

Ընկերութիւնը յուրաքանչյուր անդամի հաշվային գրքույկում պարտավոր է գրել.— վարկի առավելագույն գումարը, ընկերութեան պարտավորութիւններին նկատմամբ տվյալ անդամի լրացուցիչ պատասխանատվութեան չափը, վերադարձման յենթակա նրա վճարած փայական և այլ մուծումները, ինչպես և նշանակել վերոհիշյալ մուծումների և փոխառութիւնների շքանառութեան վերաբերյալ բոլոր հաշիվները:

Հոդվ. 16.—Ի՞նչ իրավունքներով է ոգտվում Ընկերութեան յուրաքանչյուր անդամը:

Ընկերութեան յուրաքանչյուր անդամ իրավունք ունի մասնակցելու ընդհանուր ժողովներին և տվյալ, Ընկերութեան կանոնադրութեան համաձայն, իր տնտեսական գործերում ոգտվելու Ընկերութեան սպասարկումներէց:

Ի՞նչ իրավունքներով են ոգտվում Ընկերութեան անդամ հանդիսացող իրավական անձինք:

Այն իրավական անձինք (բացի կոլլեկտիվներից), վորոնք Ընկերութեան անդամ են, ինչպես՝ պարզ արտադրական կոտպերատիվները, գյուղատնտեսական արտադրութեամբ զբաղվող գյուղացիական փոխադարձ ոգնութեան ընկերութիւնները և այլն,— Գյուղատնտեսական վարկային Ընկերութիւնների գործերի կառավարչութեանը և Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովներին մասնակցում են իրենց ներկայացուցիչների միջոցով: Ըստ վորում, վերոհիշյալ տեսակի իրավական անձինք, անկախ փայերի վրանակից, ընդհանուր ժողովում ոգտվում են մեկ ձայնի իրավունքով:

Ի՞նչ իրավունքներով են ոգտվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերություն անդամ գյուղատնտեսական կոլլեկտիվները: Գյուղատնտեսական կոլլեկտիվներին, ինչպես՝ հողոգտագործական ընկերություններին, արտելներին և կոմունաններին, վորոնք Ընկերության անդամ են, իրավունք է վերապահված ընդհանուր ժողովներում, վճռական ձայնի իրավունքով, ունենալ մի քանի ներկայացուցիչներ:

Հոդվ. 17.— Ի՞նչ լրացուցիչ պատասխանատվություն է կրում ընկերության յուրաքանչյուր անդամ ընկերության պարտավորությունների նկատմամբ:

Ընկերության լրացուցիչ պատասխանատվությունը յերկու տեսակի յե: Ընկերության այն անդամը, վորն ունի բացված վարկ, լրացուցիչ պատասխանատվություն է կրում իրեն բացված վարկի առավելագույն գումարի վորոշված բազմապատիկի չափով: Որինակ՝ յեռապատիկ պատասխանատվության դեպքում ընկերության անդամն իրեն բացված վարկից յերեք անգամ գերազանցող գումարի պատասխանատվություն է կրում: Իսկ այն անդամը, վորը բացված վարկ չունի, լրացուցիչ պատասխանատվություն է կրում փայական մուծումների գումարի (և հատուկ կապիտալների համար պարտադիր վերադառնալի մուծումների) վորոշ բազմապատիկի չափով: Որինակ՝ յեթե այդպիսի անդամների համար Ընկերությունը փայի նկատմամբ սահմանել է տասնապատիկ պատասխանատվություն, ապա յուրաքանչյուր այդպիսի անդամ կրում է իր փայական մուծումների (և հատուկ կապիտալների համար պարտադիր վերադառնալի մուծումների) գումարից տասն անգամ գերազանցող գումարի պատասխանատվություն:

Կրո՞ւմ են արդյոք լրացուցիչ պատասխանատվություն ընկերության անդամ հանդիսացող իրավական անձինք:

Կոոպերատիվ կազմակերպությունների զանազան տեսակները, ինչպես և գյուղատնտեսական կոլլեկտիվները և այլ անձինք, վորոնք ընկերության անդամ են, Գյուղատնտեսական Վարկային Ընկերության պարտավորությունների նկատմամբ կրում են նույնպիսի լրացուցիչ պատասխանատվություն, ինչպիսին սահմանված է Ֆիզիքական (անհատ անդամների) անձանց համար:

Ընկերության անդամների համար ո՞վ է սահմանում լրացուցիչ պատասխանատվության չափը:

Ընկերության անդամների լրացուցիչ պատասխանատվության չափը սահմանում է ընդհանուր ժողովն ու դա պիտի մատնանշված լինի Ընկերության կանոնադրության մեջ:

Անդամների վոր վնարումները չեն ներառվում լրացուցիչ պատասխանատվության մեջ:


Ի հաշիվ լրացուցիչ պատասխանատվության չեն ներառվում այն վճարումները, վորոնք անդամները մուծում են ծածկելու Ընկերության տարեկան գործունեության հետեանքով ստացված վնասը, ծածկելու համար այլ և այն մուծումները, վոր վճարում են անդամներն իրենց վրա վերցրած յերաշխավորությունների հաշվին: Այլ կերպ ասած, յեթե մինչև Ընկերության լուծարքը, ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ անդամների մեջ Ընկերության կրած վնասի (վոր հետեանք է յեղել ընկերության տարեկան գործունեության) գումարը բաշխվել է, ապա այդ բաշխման համաձայն վճարած գումարը հաշվի չի առնվում անդամների լրացուցիչ պատասխանատվության համաձայն—անդամներից վճարումներ գանձելիս:

Անդամի վոր գույքի վրա յե տարածվում լրացուցիչ պատասխանատվությունը, յեթե նա չունի անջատ տնտեսություն:

Այդպիսի անդամի լրացուցիչ պատասխանատվությունը տարածվում է ինչպես նրա անձնական գույքի, նույնպես և ծխի կամ կոլլեկտիվի ընդհանուր գույքի մեջ յեղած նրա բաժնի վրա:

Հոդվ. 18.— Կարո՞ղ է արդյոք ընկերությունն ամդամի համար սահմանված լրացուցիչ պատասխանատվության չափը պակասացնել և ի՞նչ կարգով:

Առանց իր պարտատերերի, ինչպես և առանց իր ավանդատուների համաձայնության, Ընկերությունը չի կարող անդամների համար սահմանված լրացուցիչ պատասխանատվության չափը պակասեցնել: Ընկերության պարտատերերի և ավանդատուների համաձայնության դեպքում, վորոնք պետք է ընդհանուր առմամբ Ընկերության բոլոր պարտավորությունների կեսից պակասը չունենան,— Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունն իրավունք ունի պակասեցնելու սահմանված լրացուցիչ պատասխանատվությունը, վորի համար պիտի համապատասխան փոփոխություններ մտցնի իր կանոնադրության մեջ: Ըստ վորում, այդ փոփոխությունը սահմանված կարգով պիտի գրանցման յենթարկվի:



ի՞նչ ե վերապահվում ընկերութեան այն պարտատերերին (նաև ավանդատուներին), յետև նրանք համաձայն չեն պակասեցնելու անդամների համար սահմանած լրացուցիչ պատասխանատվությունը:

Նրանց իրավունք ե վերապահում, վեց ամսվա ընթացքում արտաժամկետային կարգով պահանջել ընկերութեան պարտքերը, պահպանելով նրանց պահանջի վերաբերմամբ լրացուցիչ պատասխանատվութեան նախկին չափը:

Վո՞ր ժամանակից ե հաշվում վերոհիշյալ վեցամսյա ժամկետը:

Վեց ամսվա ժամկետը հաշվում ե կանոնադրութեան փոփոխութեան դրանցման հաստատութեան օրէց:

Հոդվ. 19.—Անդամի համար բացված առավելագույն վարկի գումարի իջեցման դեպքում, վո՞րքան ժամանակվա ընթացքում չի պակասեցվում նրա լրացուցիչ պատասխանատվութեան չափը:

Այդ դեպքում անդամի լրացուցիչ պատասխանատվութեան չափը չի պակասեցվում ընթացիկ ե նրան հաջորդող գործառնական տարվա ընթացքում:

Հոդվ. 20.—Իրավունք ունի՞ արդյոք անդամն իր ցանկութեամբ ընկերութունից հեռանալու:

Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ընկերութունից հեռանալու, տալով այդ առթիվ գրավոր հայտարարութուն:

Հոդվ. 21.—Կարո՞ղ ե արդյոք ընկերութեան անդամը հեռացվել ընկերութունից, ի՞նչ պատճառով ե ի՞նչ կարգով:

Ընկերութեան հանգեպ իր պարտավորութունները չկատարող, ընկերութեան կանոնադրութունը խախտող, ընկերութեան վարչական մարմինների օրինական պահանջներին չենթարկվող անդամը, ընդհանուր ժողովի վորոշմամբ, կարող ե հեռացվել ընկերութունից:

Կարո՞ղ ե արդյոք հեռացված անդամը նորից ընդունվել ընկերութեան մեջ:

Ընդհանուր ժողովի վորոշմամբ հեռացված անդամը կարող ե վերընդունվել ընկերութեան մեջ:

Հոդվ. 22.—Ի՞նչ կարգով ե կատարվում ընկերութեան անդամ յեղած ե իր գործունեութունը դադարեցրած վորեև կազմակերպութեան ընկերութունից հեռացումը:

Ընկերութեան անդամ յեղած կողմերատիվ կազմակերպութեան վորոշումը՝ իր գործունեութեան դադարեցման մասին, հա-

մագոր ե համարվում ընկերութունից հեռանալու նրա հայտարարութեանը: Հետևապես, ունենալով տվյալ կազմակերպութեան այդպիսի վորոշումը, ընկերութեան վարչութունը այդ կազմակերպութունը հեռացված ե համարում ընկերութեան անդամների շարքից:

Ո՞վ ե ընկերութեան անդամների ցուցակից դուրս հանում մեռած անդամներին:

Մեռած անդամներին ընկերութեան անդամների ցուցակից դուրս ե հանում վարչութունը:

Հոդվ. 23.—Ի՞նչ դեպքերում ընկերութեան վարչութեան ե խորհրդի միացյալ ժողովը կարող ե վորոշել ընկերութեան կազմից հեռացնել անդամին:

Այն հատկութունները կորցնելու դեպքում, վորպիսիք անհրաժեշտ են ընկերութեան անդամ լինելու համար, այսինքն—

- ա) Յերբ անդամն ընկերութեան գործունեութեան շրջանում դադարեցնում ե գյուղատնտեսութեամբ կամ նրա հետ առնչութուն ունեցող վորեև գրադմունքով պարապելը:
- բ) Յերբ ընկերութեան գործունեութեան շրջանում անդամը դադարում ե հասարակագուտ աշխատանք կատարելուց:
- գ) Յերբ ընկերութեան անդամ կողմերատիվ ստորին կազմակերպութեան վարչութունը տեղափոխվում ե ընկերութեան գործունեութեան շրջանից:
- դ) Յերբ ընկերութեան անդամ, գյուղատնտեսական հասարակական փոխադարձ ոգնութեան կոմիտեն դադարեցնում ե իր գյուղատնտեսական արտադրական գործունեութունը:

Հոդվ. 24.—Վո՞ր ժամանակից ե անդամը ընկերութունից հեռացված համարվում:

Ինքնակամ հեռանալու դեպքում—հեռանալու առթիվ հայտարարութուն տալու օրվանից: Անդամը մեռնելու դեպքում—մեռած օրվանից: Այլ պատճառներով հեռանալու դեպքում—այն օրվանից, յերբ ընկերութեան համապատասխան օրգանն, այսինքն՝ ընկերութեան ընդհանուր ժողովը կամ վարչութունն ու խորհուրդը միասին վորոշում են կայացնում անդամին ընկերութունից հեռացնելու մասին:



Հողվ. 25.—Անդամն ինքնակամ հեռանալու կամ հեռացնելու դեպքում, յերբ այդ անդամը պարտք է ընկերութեանը, արդոյք վերջինս իրավունք ունի՞ ժամկետից առաջ հեռացող անդամից գանձել նրա պարտքը:

Այդպիսի դեպքերում Ընկերութեանն իրավունք ունի հեռացող անդամից ժամկետից առաջ գանձելու պարտքը:

Հողվ. 26.—Ընկերութեանից հեռացվող անդամին յե՞րբ է վերադարձվում նրա վճարած փայտական և այլ վերադառնալի մուծումները:

Ինքնակամ հեռացող կամ հեռացված անդամին, ինչպես յե մեռած անդամի ժառանգներին վերադարձնելու յենթակա փայտական և այլ մուծումները տրվում են այն որից յերեք ամիս անցնելուց հետո, յեթե հաստատվում է այն տարվա հաշվետվութեանը, վոր տարին անդամը հեռացել է:

Արդոյք հեռացող անդամն ընկերութեան վորևէ այլ գույքի վերաբերմամբ իրավունք ունի՞:

Վոչ, չունի:

Նախկին անդամի հետ վերջնահաշիվ տեսնելիս, ընկերութեանը հաշվո՞ւմ է արդոյք նրա չվճարած բոլոր պարտքերը:

Այո, հաշվում է:

Կարելի՞ յե արդոյք մեռած անդամի վերադառնալի փայտական և այլ մուծումները փոխանցել նրա հաջորդին՝ ըստ ծխի:

Կարելի յե, յեթե նրա հաջորդն, ըստ ծխի, կանգամադրվի Ընկերութեանը, նախքան ծխի մեռած անդամի ժառանգների հետ գույքային վերջնահաշիվ կատարելը: Այդ դեպքում նրա վրա յե անցնում նաև մեռած անդամի լրացուցիչ պատասխանատվութեան պարտավորութեանները:

Հողվ. 27.—Հեռացած անդամները պատասխանատու՞ է յեն արդոյք ընկերութեան վնասների ու պարտավորութեանների համար:

Հեռացած անդամները, մյուս անդամներին համահավասար պատասխանատվութեան են կրում ծածկելու Ընկերութեան այն գործառնական տարվա վնասները, վորի ընթացքում անդամը հեռացել է: Բացի այդ, նա պատասխանատու յե Ընկերութեան պարտավորութեանների նկատմամբ, յեթե ընկերութեանը, անդամի հեռանալու որից մի տարվա ընթացքում դադարեցնում է իր գործունեութեանը:

Հողվ. 28.—Արդոյք ընկերութեանից հեռացող բոլոր անդամների վրա յե տարածվում վերոհիշյալ կարգը:

Վոչ, վոչ բոլորի վրա: Այն հեռացող անդամների համար, վորոնք հեռանալիս չեն վճարել ընկերութեան ունեցած իրենց պարտքը, Ընկերութեան պարտքերի վերաբերմամբ նրանց ունեցած պատասխանատվութեան վերջնալու ժամկետը, ինչպես և նրանց՝ Ընկերութեան լրացուցիչ պատասխանատվութեան նկատմամբ ունեցած պարտավորութեանների վերջնալու ժամկետը հաշվում է Ընկերութեան ունեցած իրենց պարտքերը լիովին վճարելու որվանից:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հողվ. 29.—Վորտեղից են կազմվում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան միջոցները:

Ընկերութեան միջոցները կազմվում են անդամների մուծումներից, ավանդներից, փոխառութեաններից, Ընկերութեան ոպերացիաների տոկոսներից և Ընկերութեանը տրամադրվող այլ գումարներից ու արժեքներից:

Ա. Գ Ր Ա Մ Ա Գ Լ Ո Ւ Խ

Հողվ. 30.—Ի՞նչպիսի դրամագլուխներ պիտի ունենա Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեանը:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեանը պարտավոր է ունենալ հիմնական ու պահեստի դրամագլուխներ: Բացի դրանից, Ընկերութեանը կարող է կազմել հատուկ դրամագլուխներ:

Հողվ. 31.—Հիմնական կապիտալն ի՞նչ մասերից է բաղկացած:

Հիմնական կապիտալի մեջ տարբերվում են յերեք մասեր:

1. Սեփական մաս, վորի մեջ են մտնում մուտքի վճարները, գուտ շահույթից հատկացված մասհանումները, նվիրատվութեանները և այլ գումարներ, վորոնք ընդհանուր ժողովի վորոշմամբ հիմնական դրամագլխին են հատկացվում:

2. Փայովճարների մաս, վորի մեջ են մտնում անդամների փայովճարները:

3. Փոխառական մաս, վորի մեջ են մտնում այն գումարները, վորոնք փոխառութեան միջոցով ստացված են հիմնական դրամագլխի համար:

Հողվ. 32.—Ի՞նչով է փոխարինվում հիմնական կապիտալի փոխառական մասը, փոխառութեանը մարելուն գուզրնից:

Հիմնական կապիտալի փոխառական մասը աստիճանաբար պիտի փոխարինվի ընկերութեան նեփական միջոցներով, վորը պիտի կուտակվի Ընկերութեան շահույթներից, ինչպես և այլ մասհանումներից:

Ընկերութեան հիմնական կապիտալի համար փոխառութեան կնքելու վորպիսի նվազագույն ժամկետ ե թույլատրվում:

Համառուական Կետրոնական Գործադիր կոմիտեյի և ՌՍՖՍՀ Ժողովրդական կոմիսարների կողմից 1927 թ. հոկտեմբերի 3-ի գյուղատնտեսական կոոպերացիայի մասին հաստատած կանոնադրութեամբ, հիմնական կապիտալի համար փոխառութեաններ կնքվում են կամ մինչև Ընկերութեան գործունեութեան դադարելը, կամ վորեւե վորոշ ժամկետով, վորը սակայն 10 տարուց պակաս չպիտի լինի:

Ի՞նչ սահմաններում ե թույլատրվում փոխառութեան կրնբել ընկերութեան հիմնական կապիտալի համար:

Վերոհիշյալ կանոնադրութեան համաձայն, այդպիսի փոխառութեանների գումարը չի կարող ավելի լինել Ընկերութեան անդամների լրացուցիչ պատասխանատվութեան ընդհանուր գումարից:

Հոդվ. 33.— Ի՞նչ կարգով և ո՞վ ե սահմանում մուտքի վճարների չափը:

Մուտքի վճարները չափը սահմանում ե ընդհանուր ժողովը: Սովորաբար Ընկերութեան անհատ անդամների համար մուտքի վճար սահմանվում ե ավելի քիչ, քան կոոպերատիվ կազմակերպութեանների համար: Մուտքի վճարները չափը, ինչպես անհատ անդամների, նույնպես և կազմակերպութեանների համար, մատնանշվում ե կանոնադրութեան մեջ:

Շատ ընկերութեաններ մուտքի վճարն անհատ անդամների համար սահմանել են 1 ուրբլի, իսկ կազմակերպութեանների համար՝ 3 ուրբլի:

Հոդվ. 34.— Ո՞վ ե սահմանում փայլավճարի չափը:

Փայլավճարի չափը սահմանում ե Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը և մատնանշվում ե կանոնադրութեան մեջ:

Մինչև վերջին ժամանակներս շատ ընկերութեանների մեջ վճարը 5 ուրբլի եր, սակայն 1927 թ. սկսած շատ ընկերութեաններ մտքրել են 10 ուրբլու փայլավճար: Հասկանալի յե, վոր չքավորների համար կիրարկվում են համապատասխան արտոնութեաններ:

Քանի՞ փայլից վոչ պակաս պիտի վճարի ընկերութեան յուրաքանչյուր անդամ:

Ընկերութեան յուրաքանչյուր անդամ պիտի վճարի մեկ փայլից վոչ պակաս:

Փայլերի ի՞նչպիսի պարտավորեցուցիչ բանակ պիտի վճարի ընկերութեան յուրաքանչյուր կոոպերատիվ կազմակերպութեան:

Ընկերութեան անդամազրվող առանձին կոոպերատիվ և այլ կազմակերպութեանների համար փայլերի պարտավորեցուցիչ քանակը վորոշում ե Ընկերութեան անդամների Ընդհանուր ժողովը:

Առանձին կոոպերատիվ կազմակերպութեանների համար փայլերի պարտավորեցուցիչ բանակ վորոշելիս ընդհանուր ժողովն ի՞նչ ե նկատի առնում:

Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը նկատի յե ունենում, ինչպես տվյալ կազմակերպութեան ընդգրկած անդամների թիվը, նույնպես և տվյալ կազմակերպութեան հզորութեանը բնորոշող տնտեսական այս կամ այն հատկանիշը:

Կարո՞ղ ե արդյոք հետաձգվել փայլի վճարումը:

Փայլի վճարումը կարող ե հետաձգվել ընդհանուր ժողովի կողմից սահմանված կանոնների համաձայն: Յուրաքանչյուր Ընկերութեան պետք ե վորոշում ունենա չքավորների փայլերը գանձելու հետաձգման մասին:

Ընկերութեան առանձին անդամների պարտավորութեանների դիմաց թույլատրվում ե վերցնել փայլավճարները, նույնպես և այն դեպքերում, յերբ առանձին անդամների պարտավորութեանների վերաբերմամբ պահանջն արվում ե անվիճելի կամ վարչական կարգով:

Վոչ, չե թույլատրվում:

Հոդվ. 35.— Թույլատրվում ե արդյոք փայլը հանձնել ուրիշ անձանց:

Վոչ, չի թույլատրվում, բացառութեամբ այն դեպքերի, յերբ մեռած անդամին փոխարինում ե նրա հաջորդն, ըստ ծխի:

Հոդվ. 36.— Ի՞նչպես ե կազմվում Ընկերութեան պահեստի դրամագլուխը:

Պահեստի դրամագլուխը, վոր նշանակվում ե ընկերութեան ունենալիք հնարավոր վրասները ծածկելու համար, կազմվում ե Ընկերութեան յուրաքանչյուր տարվա զուտ շահույթից 20 տոկոսից վոչ պակաս մասհանումներից, պահեստի դրամագլխի տոկոսներից և այլ յեկամուտներից, վորոնք ընդհանուր ժողովի վորոշմամբ հատկացվում են պահեստի դրամագլխին:

Յե՞րբ ե դադարում զուտ շահույթից պահեստի դրամազլխի մասհանումներ կատարելը:

Յերբ պահեստի դրամազուլելը կհասնի հիմնական դրամազլխի փայական մասին, այն ժամանակ շահույթները պահեստի դրամազլխին հետագա մասհանումներ կատարելը կարող ե դադարեցվել՝ ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Ո՞վ ե վորոշում պահեստի դրամազուլելը պահելու կարգը:

Պահեստի դրամազուլելը պահելու ձևը, վորով ապահովվում ե անվնաս պահպանումն ու ըստ հարկին նրա անարգել ուղտագործումը, վորոշում ե Ընկերության անդամների ընդհանուր ժողովը, համաձայն համապատասխան դաշնակից հանրապետության օրենսդրության: ՌՍՖՍՀ մեջ, համաձայն գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերմամբ 1927 թ. հոկտեմբերի 3-ին հաստատված կանոնադրության, պահեստի դրամազուլելը պահելու համար վորոշվում ե հետևյալ կարգը.—

Պահեստի դրամազլխի գումարներն առանձին ընթացիկ հաշվով մուծվում են պետական կամ կոոպերատիվ վարկային հաստատությունները, Գյուղատնտեսական Վարկի հիմնարկություններն ու կոոպերատիվ բանկերը, կամ դրանցով ձեռք են բերվում պետական կամ կոոպերատիվ փոխառությունների պարտատուներ:

Յեթե Գյուղատնտեսական Վարկային Ընկերության կանոնադրությամբ նախատեսված ե, վոր վնասները ծածկելու համար անդամները պարտադիր մուծումներ անեն, ապա պահեստի դրամազլխի 50 տոկոսը, ընդհանուր ժողովի թույլտվությամբ, վստահելի ապահովությամբ կարելի յե գործադրել, վորպես կարձատե փոխառություն:

Հողվ. 37.—Ի՞նչ նպատակների համար կարող են կազմվել հատուկ դրամազուլումներ:

Հատուկ դրամազուլումներ կարող են կազմվել.—

- ա) Ընկերության կողմից վաճառահանման ու մատակարարման գործարքներ կատարելու համար:
- բ) Ընկերության անդամների տնտեսական կարիքներին սպասարկող ձեռնարկումներ կազմակերպելու համար:
- գ) Ընկերության համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու համար:
- դ) Այլ հիմնարկների ու կազմակերպությունների փայեր ու աղցիաներ ձեռք բերելու համար:

յե) Տվյալ Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ նպատակների համար:

Ո՞վ ե վորոշում հատուկ դրամազուլել կազմելու աղբյուրները ե նրա ծախսելու կարգը:

Այդ բոլորը վորոշում ե Ընկերության անդամների ընդհանուր ժողովը, վորն այդ հարցին պիտի վերաբերվի չափազանց լուրջ, նկատի ունենալով, վոր հատուկ դրամազուլումներն Ընկերության վաճառահանման-մատակարարման ե արտադրական նպատակների համար են հատկացված, քանի վոր այդ նպատակներին տրամադրվել չեն կարող այն միջոցները, վորոնք անդամների վարկավորմանն են հատկացված:

Հողվ. 38.—Հատուկ դրամազուլումներ կազմելու համար կարող ե արդյոք վորոշվել ե ո՞վ կարող ե վորոշել, վոր անդամները պարտադիր կերպով մուծումներ անեն:

Ընկերության անդամների ընդհանուր ժողովը հատուկ դրամազուլումներ կազմելու համար կարող ե անդամների համար պարտադիր մուծումներ կարգել, վորոնք անդամի հեռանալու դեպքում, ըստ ընդհանուր ժողովի վորոշման, կարող են վերադարձվել կամ չվերադարձվել: Բացի այդ, հատուկ դրամազուլումներ կազմելու համար մասհանումներ կարող են կատարվել Ընկերության զուտ շահույթից, ըստ ընդհանուր ժողովի վորոշման:

Հատուկ դրամազուլումների համար թույլատրվում են արդյոք փոխառություններ:

Որենքով սահմանված կանոնների պահպանությամբ, հատուկ դրամազուլումների մեջ կարող են մտցվել նաև այն գումարները, վորոնք ստացվում են յերկարատե փոխառության միջոցով:

Ընկերության անդամների կողմից հատուկ դրամազուլումների կազմակերպության համար մուծած, վերադարձվելի մուծումներն յետ տալու մասին, ի՞նչպիսի կանոններ զոյություն ունեն:

Յեթե ընկերության անդամների ընդհանուր ժողովն այդ առթիվ չի սահմանել հատուկ կանոններ, ապա հատուկ դրամազուլումների համար անդամների մուծած վերադարձվելի գումարների յետ տալը կատարվում ե անդամների փայական վճարումները վերադարձնելու ե անդամների լրացուցիչ պատասխանատվությունը վորոշելիս, դրանց հաշվառքը կատարելու համար սահմանված կանոններով: Այսինքն, հատուկ դրամազուլումների համար վերադարձնելու պայմանով կատարված մուծումները վերադարձ-

վում են հեռացող կամ հեռացվող անդամին, ինչպես և մեռած անդամի ժառանգներին, յեռամայա ժամանակամիջոցը լրանալուց հետո, այն որից հաշված, յերբ հաստատվում է այն տարվա հաշվետվութունը, վոր տարին հեռացել է անդամը:

Ո՞վ է վորոշում հատուկ դրամագրութիւնների համար պարտադիր մուծումների առավելագույն չափը ընկերութեան յուրաքանչյուր անդամի համար:

Այդ առավելագույն չափը սահմանում է Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը և մատնանշվում է կանոնադրութեան մեջ:

Բ. Ավանդներ յեվ փոխառուքուցներ

Հոդվ. 39.—Ի՞նչ նպատակով է Գյուղատնտեսական վարկային Ընկերութունը ավանդներ ընդունում:

Ընկերութեան դրամական այն միջոցներն ավելացնելու նպատակով, վորով փոխատվութուն պիտի տրվի վարկի կարիք ունեցող անդամներին, ինչպես և այն նպատակով, վորպեսզի գյուղացիութեանը հնարավորութուն տրվի թէ իրենց և թէ ուրիշների ոգտի համար կուտակել և պահել իրենց խնայողութունները:

Ընկերութունն ո՞ւմից է ընդունում ավանդները:

Ընկերութունն ավանդներ է ընդունում ինչպես իր անդամներից, նույնպես և կողմնակի անձերից, կազմակերպութուններից ու հիմնարկութուններից:

Կարո՞ղ են արդեյոք տեղական բյուջեյով պահվող գյուղական հիմնարկները (չբջջործկումները), ինչպես և պետական ձեռնարկութունները, վորոնք գործում են տնտեսավարական հիմունքներով (չարարագործարանները, խորհրդային տնտեսութունները և այլն) իրենց ազատ միջոցները պահել գյուղատնտեսական վարկային ընկերութունների մեջ:

ԽՍՀ Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի 1927 թ. ոգոստոսի 31-ի վորոշման համաձայն թույլատրվում է տեղական բյուջեյով պահվող բոլոր հիմնարկութուններին, պահպանելով ԽՍՀ Միութեան Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած կանոնները— ինչպես նաև տնտեսական հիմունքներով գործող բոլոր ձեռնարկութուններին, իրենց ազատ միջոցները պահել կոոպերատիվ վարկային ընկերութունների մեջ:

Հոդվ. 40.—Ո՞ւմ անունով կարելի յե մուծել ավանդները:

Ավանդներ կարելի յե մուծել ինչպես ավանդատվի անունով, նույնպես և ուրիշի անունով:

Կարելի՞ յե արդեյոք ավանդներ մուծել առանց ավանդատվի անունը հայտնելու:

Ընկերութունը կարող է ընդունել ավանդներ, վորոնք մուծվում են առանց ավանդատվի անունը նշելու, ներկայացնողի անվամբ: Այդպիսի ավանդի տերը հանդիսանում է նա, ում ձեռքին գտնվում է Ընկերութեան կողմից տրված ավանդային փաստաթուղթը:

Հոդվ. 41.—Ի՞նչպիսի պայմաններով Ընկերութունը կարող է ավանդներ ընդունել:

Ընկերութունն ավանդներ կարող է ընդունել.—

ա) վորոշած ժամկետում (ժամկետային ավանդներ) վերադարձնելու պարտավորութեամբ:

բ) Ցպահանջ (անժամկետ ավանդներ) — առանց վերադարձնելու ժամկետը վորոշելու:

գ) Ավանդատվի կողմից ցույց տրված առանձին պայմաններ կամ հանգամանքներ առաջ գալու դեպքում վերադարձնելու պայմանով (պայմանական ավանդներ):

Ի՞նչ դեպքերում է գյուղացիութեան համար ձեռնառու Ընկերութեան մեջ ունենալ պայմանական ավանդ:

Որինակ, գյուղացու համար ձեռնառու յե Ընկերութեան մեջ ավանդ ունենալ իր աղջկա անունով, պայմանով, վոր այդ ավանդը նրան տրվի ամուսնանալիս, կամ ավանդ ունենալ տղայի անունով, պայմանով, վոր այդ ավանդը տրվի տղային՝ նրա առանձին տնտեսութուն կազմելու մոմենտին:

Կարո՞ղ է արդեյոք Ընկերութունն ընթացիկ հաշվով ավանդներ ընդունել, տալով չեկի գրքույկներ:

Կարող է, սակայն ֆինանսական (նահանգական կամ շրջանային ֆինբաժինների) որգանների հատուկ թույլտվութեամբ միայն:

Հոդվ. 42.—Թույլատրվո՞ւմ է արդեյոք ընդունել կտակային ավանդներ:

Ընկերութունը կարող է այդպիսի ավանդներ ընդունել, պայմանով, վոր ավանդատվի մահից հետո այն տրվի նրա մատնանշած անձին:

Իրավունք վերապահվո՞ւմ է արդեյոք Ընկերութեանն ընդունելու այնպիսի անձերին կտակված ավանդներ, վորոնք ընդհան-

նոր քաղաքացիական որոնքներով չեն մտնում ավանդատվի որինական ժառանգների շարքը:

Ընկերութունը կարող է այդպիսի ավանդներ ընդունել պայմանով, վոր ավանդատվի մահից հետո դա տրվի, նույնիսկ ավանդատվի կողմից մատնանշված այնպիսի անձի, վորը չի հանդիսանում ավանդատվի որինական ժառանգը:

Ի՞նչպես է ձևակերպվում այդպիսի ավանդն ընդունելը:

Այդպիսի ավանդ մուծելու դեպքում ավանդատուն գրավոր հայտարարութուն է տալիս: Այդ հայտարարութւյան մեջ մատնանշում է այն անձի անունը, հայրանունն ու ազգանունը և մանրամասն հասցեն, վորին կտակվում է ավանդը:

Հոդվ. 43.— Գաղտնի յե պահվում արդյոք ավանդների գումարն ու ավանդատուների անունը:

Ընկերութունն ամենախիստ կերպով գաղտնի պիտի պահի ավանդների գումարները և ավանդատուների անունները:

Վո՞ր որգանների պահանջմամբ Ընկերութունը ավանդների և ավանդատուների անունների մասին տեղեկութուններ է տալիս:

Ավանդների և ավանդատուների անունների մասին տեղեկութուններ կարող են տրվել դատական կամ քննչական որգանների վորոշման համաձայն: Ուրիշ պետական հիմնարկներ, նույնիսկ հարկային տեսչութունը, իրավունք չունեն վերոհիշյալ տեղեկութունները պահանջելու:

Ի՞նչպիսի պատասխանատվութուն են կրում ավանդների գաղտնիքները տարածող պաշտոնատար անձինք:

Ավանդատուների անունները և ավանդները գումարների գաղտնիքները տարածող ընկերութւյան վարչական որգանների անդամները, նույնպես և Ընկերութունը վերաստուգող կամ հետադոտող անձինք յենթարկվում են քրեական պատասխանատվութւյան:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերութւյան մեջ ավանդունենալու առկայութւյունն ունի՞ արդյոք ավանդատվի համար վորեւ անձեռնտու հետեվանք, ինչպես՝ իրավունքների սահմանափակում, հարկի յենթարկվել և այլն:

Վո՞չ, չունի: Ըստ Արդարագատութւյան Ժողովրդական կոմիսարիատի բացատրութւյան, «վարկային հաստատութւյուններում ավանդների առկայութւյունը վոչ մի անձեռնտու հետեւանք չունի ավանդատվի համար», «աշխատավորական ավանդներից տոկոս-

ներ ստացող անձինք, վորոնց համար այդ յեկամուտները չեն հանդիսանում իրենց գոյութւյունը պահպանելու հիմնական աղբյուր, չեն զրկվում ընտրական իրավունքներէց»:

Հոդվ. 44.— Ի՞նչ կարգով կարող է ավանդը բռնագանձվել և արգելք դրվել նրա վրա:

Վոչ այլ կերպ, քան դատարանի հատուկ վորոշմամբ:

Հոդվ. 45.— Վո՞ր հերթին է բավարարվում ավանդատուների ավանդները վերադարձնելու պահանջը:

Յերբ Ընկերութւյան պարտատերերը պահանջում են իրենց պարտքերը և ներկայացված այդ բոլոր պահանջները բավարարելու համար Ընկերութւյան գույքն անբավարար է, այդ դեպքում ավանդատուների պահանջը բավարարվում է— Ընկերութւյան ծավանդատուների պահանջը բավարարվում է— Ընկերութւյան ծավանդատուների և բանվորների, ըստ աշխատանքային պայմանագրի, պահանջները, սոցիալական ապահովագրութւյան պարտքերը և հաշմանդամութւյան ու մահվան առթիվ յեղած վարձատրութւյունները կատարելուց հետո՝ առաջին հերթին:

Ի՞նչով է ընկերութւյունն իրեն ապահովում այն դեպքում, յերբ ավանդները վերադարձնելու համար այս կամ այն մոմենտին նրա դրամարկղում փող չի լինում:

Այդպիսի դեպքում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութւյունները միացնող հիմնարկութւյունը (պուլքրանկը), վորի անդամն է տվյալ Ընկերութւյունը, կարող է Ընկերութւյան համար բանալ հատուկ ապահովագրական վարկ:

Ի՞նչով է ապահովված Գյուղատնտեսական Վարկային Ընկերութւյան մեջ դրված ավանդների անձեռնմխելիութւյունը:

Համառուսական կենտրոնական Գործադիր կոմիտեյի և ՌՍՖՍՀ Ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1928 թ. հունվարի 30-ի վորոշման համաձայն, Գյուղատնտեսական Վարկային Ընկերութւյուններում մուծած բոլոր ընթացիկ հաշիվների ու ավանդների անձեռնմխելիութւյունն ապահովված է ՌՍՖՍՀ Գյուղատնտեսական Բանկի և Գյուղատնտեսական Վարկային Ընկերութւյան բոլոր գրամագուլթիներով ու միջոցներով:

Ի՞նչ իրավունք է վերապահվում ավանդատվին այն դեպքում, յերբ Գյուղատնտեսական Վարկային Ընկերութւյունը դադարեցնում է իր գործունեութւյունը և ընդ սմին հնարավորութւյուն չի ունենում բավարարելու ավանդատուների՝ ավանդները վերադարձնելու պահանջը:

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ՌՍՖՍՀ Ժող. Կոմիսարներին Նորհրդի վերոհիշյալ վորոշման համաձայն, ավանդավոր իրավունք և վերապահվում գյուղատնտեսական վարկի համապատասխան միությունից անհապաղ յետ պահանջել իր ավանդը՝ տվյալ Ընկերության լուծարքը նշանակելիս:

Հոդվ. 46.—Ո՞վ և սահմանում ավանդների տոկոսների չափը:

Ավանդների տոկոսների չափը սահմանում և Ընկերության անդամների ընդհանուր ժողովը կամ նրա լիազորությամբ—Ընկերության Նորհուրդը՝ Վարչության հետ միասին:

Հոդվ. 47.—Կարող և արդյոք ժամկետավոր և պայմանական կերպով ընդունված ավանդների տոկոսներն իջեցվել, նախքան նրանց ժամկետն ու պայմանը լրանալը:

Կարող են իջեցվել, սակայն վոչ այլ կերպ, քան ավանդատվի համաձայնությամբ:

Կարող և արդյոք անժամկետ ավանդների և ընթացիկ հաշիվների տոկոսների չափը փոփոխության յենթարկվել և ո՞վ կարող և անել այդ:

Փոփոխության կարող և յենթարկվել ընդհանուր ժողովի, կամ նրա լիազորությամբ՝ վարչության ու խորհրդի միասին կայացրած վորոշման համաձայն:

Այդ դեպքում, Ընկերությունը յե՞րբ և սկսում ավանդների նկատմամբ կիրառել տոկոսների նոր դրույքները:

Վոչ շուտ, քան ավանդների տոկոսներն իջեցնելու առթիվ համապատասխան հայտարարություն լինելուց մի ամիս հետո:

Ցենթարկվո՞ւմ են արդյոք ավանդներն ու նրանց տոկոսները յեկամտահարկի տուրքադրման:

Ավանդներն, ինչպես և նրանց տոկոսները, Միութենական Կառավարության 1927 թ. ոգոստոսի 31-ի վորոշման համաձայն, ազատվում են յեկամտահարկի տուրքադրումից:

Հոդվ. 48.—Ո՞վ և վորոշում Ընկերության կնքելիք փոխառությունների ընդհանուր գումարի չափը:

Ընկերության կնքելիք փոխառությունների ընդհանուր սահմանային գումարը վորոշում և ընդհանուր ժողովը:

Ո՞վ և թույլատրում ընկերության հիմնական ու պահեստի դրամագույնների համար փոխառություններ կնքելը:

Վերոհիշյալ փոխառությունների կնքելը կատարվում և կամ ընդհանուր ժողովի թույլտվությամբ, կամ նրա լիազորությամբ՝ Ընկերության խորհրդի թույլտվությամբ:

Հոդվ. 49.—Վո՞րն և այն սահմանը, վորով սահմանափակվում և ընկերության փոխառությունների ընդհանուր գումարը:

Փոխառությունների ընդհանուր գումարը, բացառությամբ հիմնական ու հատուկ դրամագույնների համար կատարած փոխառությունների, ինչպես և Ընկերության առևտրամիջնորդական և արտադրական գործառքների համար կատարած փոխառություններից՝ չի կարող ավելի լինել, քան ամբողջ հիմնական կապիտալի, ներառյալ նաև նրա փոխառական մասը—տասնապատիկը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվ. 50.—Ո՞վ և վորոշում Ընկերության տնտեսական գործունեության պլանը:

Ընկերության տնտեսական գործունեության պլանը յուրաքանչյուր տարի սահմանում և Ընկերության անդամների ընդհանուր ժողովը, վորը վորոշում և, թե Ընկերությունն ինչպիսի գործառքներ, ինչ կարգով և վճր միջոցների հաշվին պիտի կատարի:

Ինչո՞ւ պետք և ընկերության գործունեությունը վորոշ ծրագրով ընթանա:

Նորհրդային Միության մեջ ամբողջ ժողովրդական տնտեսությունը և մասնավորապես գյուղատնտեսությունը կառուցվում և վորոշ պլանով: Դրա համար ել յուրաքանչյուր տնտեսական հիմնարկություն ու կազմակերպություն իր աշխատանքները պիտի կառուցի ու առաջ տանի պլանով: Նույնը պիտի անի նաև Գյուղատնտեսական Վարկային Ընկերությունը, վորի գյուղատնտեսության վերականգնման ու զարգացման վերաբերյալ աշխատանքը պիտի համաձայնեցված լինի տվյալ շրջանում հողային որգանների կողմից կիրարկվելիք գյուղատնտեսական զանազան ձեռնարկումների հետ: Բացի դրանից, գործունեության պլանի առկայության դեպքում Ընկերության և վարչության համար աշխատելը հեշտ և, ինչպես և ընդհանուր ժողովի համար՝ վարչության աշխատանքը գնահատելը:

Ի՞նչ և անհրաժեշտ նկատի ունենալ ընկերության տնտեսական գործունեության պլանը կազմելիս:

Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեան պլանը կազմելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր Ընկերութեան հիմնական նպատակն է—նպաստել գյուղական տնտեսութեան և նրա հետ կապված զբաղմունքներին հանրայնացման, ինչպես և նպաստել գյուղացիական մանր ու անջատ-անջատ տնտեսութեաններին միացյալ խոշոր տնտեսութեաններին վերածելուն, վորոնք կարողանան ոգտագործել ժամանակակից տեխնիկայի բոլոր նվաճումները:

Նրա համար, ուրեմն, ի՞նչք պիտի կազմի ընկերութեան տնտեսական գործունեութեան ծրագրի հիմքը:

Ընկերութեան գործունեութեան ծրագրի հիմքը պիտի կազմի ՀԱՄԿ (բ) Կ 15-րդ համագումարի կողմից առաջադրված հետեյալ գլխավոր խնդիրները.— «Գլխավոր ուշադրութեանն ուղղել չքավոր-միջակ լայն մասսաներին արտադրական կոոպերացման յենթարկելու և դրա զարգացման աջակցելու վրա, ուժեղացնելով ուշադրութեանը, ինչպես գյուղացիական ավանդները կոոպերացիայի մեջ ներգրավելու, նույնպես և գյուղատնտեսական մթերքների կոոպերատիվ վերամշակութեան ձեռնարկումներ կազմակերպելու գործի վրա»:

Ո՞վ է վորոշում Ընկերութեան առածին գործառններին վերաբերող կանոնները:

Առանձին գործառններին վերաբերող կանոնները վորոշում է անդամների ընդհանուր ժողովը, ղեկավարվելով կանոնադրութեան համապատասխան հոդվածներով: Այդ կանոններում ամենից առաջ անհրաժեշտ է ապահովել գյուղացիութեան չքավոր-միջակ խավերի շահերը:

Ա. Փ ո խ ա ս վ ու թ յ ու ճ Ե ր

Հոդվ. 51.—Ո՞ւմ և ի՞նչ սահմաններումն և ընկերութեանը փոխատվութեաններ տալիս:

Ընկերութեանը փոխատվութեան տալիս է միայն իր անդամներին՝ նրանց համար բացված վարկի սահմաններում:

Ի՞նչ պետքերի (նպատակների) համար է ընկերութեանը փոխատվութեաններ տալիս:

Փոխատվութեանները տրվում են Ընկերութեան անդամներին տնտեսական-արտադրական կարիքների համար:

Ի՞նչով են զանազանվում գյուղատնտեսական վարկի այժմյան նպատակներն այն նպատակներից, վորոնց հետապնդում են մինչ-պատերազմյան մանր վարկը:

Ռուսաստանում, մինչև հեղափոխութեանը (1913 թ.) սպառողական կարիքների, ինչպես և բանվորական ուժ վարձելու, հող գնելու և վարձակալելու, այսինքն՝ վոչ-արտադրական բնույթ ունեցող նպատակների համար տրվող փոխատվութեանները կազմում էին 52⁰/₁₀, ուրիշ խոսքով՝ վարկային կոոպերացիայի տված փոխատվութեանների կեսից ավելին:

Հասկանալի չէ, վոր այժմ այդպիսի նպատակները, ինչպիսին է հող գնելն ու վարձակալելը, բոլորովին գոյութեան չունեն, վորովհետև հողն ազգայնացված է: Գոյութեան չունի և այնպիսի նպատակներ, ինչպիսին է «ապրանքներ գնելը» և այլն: Ընդհանրապես վոչ-արտադրական վարկավորումն այժմ կազմում է մոտ մի տոկոս, ուստի վարկային ամբողջ աշխատանքն ուղղված է գյուղատնտեսական արտադրութեան բարելավմանը:

Կարո՞ղ է արդյոք ընկերութեանը փոխատվութեան տալ այնպիսի անծանց, վորոնք Ընկերութեան անդամ չեն:

Պետական, կոոպերատիվ և հասարակական կազմակերպութեանների հանձնարարութեամբ Ընկերութեանն, այդ կազմակերպութեանների համապատասխան համաձայնութեամբ, կոմիսսիոն հիմունքներով, կարող է փոխատվութեան տալ ինչպես իր անդամներին, նույնպես և վոչ-անդամներին:

Ինչո՞ւ չէ թույլատրվում վոչ-կոոպերացված ազգաբնակչութեան վարկավորումը:

Վոչ-կոոպերացված ազգաբնակչության վարկավորումը թույլատրվում է այն պատճառով, վոր գյուղատնտեսութեան բարելավման համար յերբեմն պահանջվում են այնպիսի ձեռնարկումների կիրարկում, վորտեղ անհրաժեշտ է գյուղացիական բոլոր տնտեսութեանների մասնակցութեանը:

Այսպես, որենքով, տվյալ գյուղի գյուղացիական բոլոր տնտեսութեանների հասարակական ոգտագործման յենթակա ճահճային արոտատեղերի ցամաքեցման հարցով շահագրգռված է այդ գյուղի ամբողջ գյուղացիութեանը և վոչ թե միայն նրա կոոպերացված մասը: Այդ ձեռնարկութեանն իրականացնելու համար տրված վարկը ոգուտ է տալիս տվյալ գյուղի ամբողջ գյուղացիական տնտեսութեաններին, և վոչ թե միայն նրա կոոպերացված տնտեսութեաններին:

Անբերբիութեան ղեկընում, վոր ընդգրկում է տվյալ վայրի բոլոր տնտեսութեանները, պահանջվում է սերմացվով ոգնու-

Թյուն հասցնել անբերրությունից տուժած բոլոր տնտեսություններին, վոչ թե միայն կոոպերացիաներին: Դրա համար ել Ընկերությունը առանձին դեպքերում և հատկապես վորոշված կարգով կարող և առանձին պայմաններով իրեն տրված վարկային միջոցներից փոխատվություն տալ վոչ միայն Ընկերության անդամներին, այլ և գյուղացիական մնացած ազգաբնակչության, վորոնք ապրում են տվյալ Ընկերության գործունեության շրջանում:

Հոդվ. 52.—Ինչպիսի անդամների համար և ընկերությունը վարկ բաց անում:

Վարկը բացվում և.

- ա) կոոպերացիայի ստորին կազմակերպությունների և կոլեկտիվների համար, վորոնք մտնում են Ընկերության կազմի մեջ:
- բ) Ընկերության անդամներին, վորոնք ծխի գույքը տնօրինելու իրավունք ունեն (ծխատերերին):
- գ) Ընկերության այն անդամներին, վորոնք ունեն ինքնուրույն աշխատանքային զբաղմունք, յեթե դրա հետ միասին Ընկերության անդամը ծխի այլ մասնակիցներից առանձնացած գույք ունի, կամ ել ներկայացնում է իր ծխի (ծխատիրոջ) յերաշխավորությունը:

Հոդվ. 53. Ո՞վ և վորոշում ընկերության անդամին բացվելիք վարկի առավելագույն գումարը:

Ինչպես վերը ցույց տրվեց, վարկի սահմանային գումարը վորոշում է Ընկերության անդամների ընդհանուր ժողովը:

Հոդվ. 54. Ո՞վ և ընկերության առանձին անդամի համար վարկ բացում, վարկի չափը փոփոխման յենթարկում և վարկը փակում:

Ընկերության վարչությունը խորհրդի հետ միասին, յեթե ընդհանուր ժողովն այս իրավունքն իրեն չի վերապահում: Ինչ և նշանակում անդամին վարկ բացել:

Այդ նշանակում և յուրաքանչուր անդամի (անհատական և կոլեկտիվ) համար վորոշել այն առավելագույն գումարը, վորի սահմաններում թույլատրվում է, վոր տվյալ անդամը ընկերությանը պարտք լինի:

Հոդվ. 55.—Վերանայվո՞ւմ են արդյոք ընկերության անդամներին բացված վարկերը:

Անդամներին բացված վարկերը ամեն տարի պիտի վերանայվեն այն կարգով, ինչ կարգով նրանք բացվում են:

Ինչո՞ւ համար ամեն տարի պիտի վերանայվեն անդամներին բացված վարկերը:

Ամեն տարի անդամներին բացված վարկերը վերանայվում են այն պատճառով, վորովհետև անդամների տնտեսական դրությունը փոփոխվում է, դրա հետ միասին փոխվում է նաև նրանց վարկային պահանջը:

Հոդվ. 56.—Ինչպիսի փոխատվություններ և տալիս ընկերությունը:

Ըստ բացված վարկերի, տրվելիք փոխատվությունները կարող են լինել կարճատև՝ 12 ամսից վոչ ավելի ժամկետով և յերկարատև՝ 12 ամսից ավելի ժամկետով:

Ինչ միջոցների հաշվին, ընկերությունը կարող է յերկարատև փոխատվություններ տալ:

Յերկարատև փոխատվություններ կարող են տրվել, ինչպես ի հաշիվ այդ նպատակով ունեցած հատուկ վարկերի հաշվին, նույնպես և Ընկերության այլ յերկարատև միջոցների հաշվին: Ընկերության տրամադրության տակ յեղած կարճատև վարկերից (վորպիսիք ընկերությունը վերցրել է մի տարվա ընթացքում վերադարձնելու պարտավորությամբ) նա չի կարող յերկարատև փոխատվություններ տալ, առանց իր ֆինանսական դրությունը խախտելու:

Ինչո՞ւ համար ընկերությունը պիտի ձգտի գլխավորապես յերկարատև վարկեր տալ:

Վորովհետև ավելի կամ պակաս յերկարատև ժամկետով տրված վարկն է միայն, վոր մեծ մասամբ կարող է արտադրական եյական բարելավում առաջ բերել, և տնտեսության մեջ շրջանառության մեջ դրվելով՝ փոխավին հնարավորություն տալ փոխատվությունն իր ժամկետին վերադարձնելու:

Հոդվ. 57.—Ինչ կարիքների համար են տրվում փոխատվությունները:

Ինչպես արդեն վերը ցույց տրվեց, փոխատվությունները տրվում են փոխատվի կողմից ճշգրիտ մատնանշված արտադրական նպատակների համար:

Արդյոք այդ վերաբերո՞ւմ է ընկերության կողմից տրված բոլոր փոխատվություններին:

Վոչ, վոչ բոլորին: Նշված սահմանափակումը չի վերաբերում այն փոխատվություններին, վորոնք տրված են վորպես

գրավական ընկերութեան իրացման համար հանձնված մթերքներն ու ապրանքների դիմաց:

Հոդվ. 58.— Ինչով են ապահովվում փոխատվութեանները:

Ընկերութեանը փոխատվութեաններ կարող ե տալ ինչպես առանց վորևե սպահովութեան, փոխառվի անձնական պարտավորագրով, նույնպես և գրավականի կամ յերաշխավորութեան ապահովութեամբ:

Ի՞նչ ձևի յերաշխավորութեան և թույլատրելի համարվում է ընկերութեան համար:

Չքափոր տնտեսութեանների համար, վորպես կանոն, թույլատրելի պիտի համարվի միայն գյուղացիական-հասարակական փոխադարձ ոգնութեան կոմիտեաների, կոլեկտիվ, կոոպերատիվ և հասարակական այլ կազմակերպութեանների յերաշխավորութեանը:

Թույլատրվում է արդյոք չքափոր անդամների համար առանձին անհատների անձնական յերաշխավորութեանը:

Վոչ, չի թույլատրվում, վորովհետև անձնական յերաշխավորութեանը սովորաբար փոխառվին դարձնում է յերաշխավորողի համար շահագործման որբեկտ, այդ յերաշխավորութեանը չքափոր-փոխառուն հատուցում է հարուստ յերաշխավորողի տնտեսութեան մեջ աշխատելով, յերաշխավորողին հյուրասիրում է և այլն:

Հոդվ. 59. Ընկերութեան փոխատվութեանների վերաբերմամբ մի անդամն առավելն ի՞նչ գումարի յերաշխավորութեան կարող ե տալ:

Տվյալ անդամին (յերաշխավորող) բացած վարկի գումարի չափ: Անդամի կողմից յերաշխավորող գումարը հաշվում է տրվյալ անդամին բացված վարկի հաշվին:

Կարո՞ղ ե արդյոք թույլատրվել յերաշխավորութեան՝ բացված վարկի գումարից ավելի չափով:

Վարչութեան խորհրդի հետ միասին կայացրած առանձին վորոշման համաձայն—կարող ե թույլատրվել:

Թույլատրելի՞ յե արդյոք կողմնակի անձանց և կազմակերպութեանների յերաշխավորութեան:

Անդամների ընդհանուր ժողովը վորոշում է—կամ թույլատրել կողմնակի անձանց և կազմակերպութեանների յերաշխավորութեանը և ի՞նչ գումարի սահմաններում, կամ ել այդպիսի յերաշխավորութեան բոլորովին չթորյալտրել, ըստ վորում ղեկավար-

վելով այն սկզբունքով, վորպեսզի յերաշխավորելիս վոչ մի դեպքում տեղի չունենան վորևե ստրկացում կամ շահագործում:

Հոդվ. 60.— Վո՞րտեղ ե պահվում փոխատվութեանն ի ապահովութեան գրավ դրած գույքը:

Փոխատվութեանն ի ապահովութեան գրավ դրած գույքը հանձնվում է ընկերութեան:

Կարո՞ղ ե արդյոք փոխառվի մոտ թողնվել փոխատվութեանն ի ապահովութեան տրված գույքը:

Փոխառվի հետ համաձայնութեան գալով, գրավ դրվելիք գույքը, անվնաս պահպանման ստորագրութեան ստանալով, կարող ե նրա մոտ ի պահ թողնվել, ըստ վորում առանձին դեպքերում ընկերութեանը գույքի վրա դնում է վորևե նշան, վորպեսզի փոխառուն այն չվաճառի կամ չփոխի:

Կարո՞ղ ե արեյոք փոխառվին իրավունք վերապահվել ոգտվելու նրան ի պահ տրված արտադրութեան գործիքներից և գյուղատնտեսական ինվենտարից:

Այդ իրավունքը փոխառվին կարող ե տրվել:

Հոդվ. 61. Կարո՞ղ ե արդյոք ընկերութեան տված փոխառութեանն ապահովել այն գույքի գրավականով, վորպիսին ձեռք բերելու համար փոխառութեանը տրվում է:

Կարելի կլինի ապահովել:

Յեթե այդ գույքը մտնում է Քաղաքացիական Դատավարական կոդեքսի 271 հոդվածում թվարկված կենսական անհրաժեշտ իրերի շարքը, վորոնք բռնագանձման յենթարկվել չեն կարող,—կարո՞ղ ե սակայն դա բռնագանձման յենթարկվել այն դեպքում, յերբ Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեանից ստացած փոխատվութեանն իր ժամանակին չի վճարվում:

Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1926 թ. նոյեմբերի 18-ի վորոշման համաձայն, նշված գույքը, թեկուզ նա մտնի յե Քաղաքացիական Դատավարական Որենսգրքի 271 հոդվածում թվարկված իրերի շարքը,—կարող ե յենթարկվել բռնագանձման, ընդ վորում Ընկերութեան վարչութեանն ինքը պիտի հաշվի առնի փոխառվի տնտեսական շահերի պաշտպանութեան անհրաժեշտութեանը, մասնավոր չքափորական տնտեսութեանների:

Հոդվ. 62.— Ո՞վ ե սահմանում փոխատվութեանների տոկոսների չափը:

Փոխատվութիւններն տոկոսներն չափը սահմանում եւ Ընկերութեան անդամներն ընդհանուր ժողովը եւ այդ չափը, նայած ժամկետներին ու փոխատվութեան նպատակներին, կտրող եւ տարբեր լինել:

Փոխատվութիւններն տոկոսներն բարձրացումը կարող եւ արդէր տարածվել այն փոխատվութիւններն վրա, վորոնք տրվել են մինչև այդ բարձրացումը:

Վոչ, չի տարածվում:

Ո՞վ եւ վորոշում տոկոսներն իջեցման պայմաններն ու ժամկետը:

Ընկերութեան անդամներն ընդհանուր ժողովը: Ընդհանուր ժողովը չքաւորական տնտեսութիւններն համար պիտի սահմանի ավելի արտոնյալ տոկոսներ:

Հողվ. 63.—Կարնատե փոխատվութիւններն տոկոսները յե՞րբ են գանձվում:

Այդ փոխատվութիւններն տոկոսները փոխատվութեան ամբողջ ժամկետի համար, գանձվում են նախորք, յեթե այլ կարգ չի սահմանված:

Վոր ժամկետի համար յերկարատե փոխատվութիւններն նախորք տոկոսներն եւ գանձվում:

Յերկարատե փոխատվութիւններն համար տոկոսներ չեն կարող գանձվել նախորք, ավելի չափով, քան մինչև փոխատվի հերթական վճարման ժամկետը միայն: Չքաւորական վարկերն եւ յերաշտի շրջաններին բաց թողնված վարկերն, առանձին դեպքերում, տոկոսները գանձվում են փոխատվութեան ժամկետը լրանալիս:

Հողվ. 64.—Իրավունք ունի՞ արդէր փոխառուն մինչև ժամկետը լրանալը մարելու ստացած փոխառութիւնը:

Փոխառվին իրավունք եւ վերապահվում մինչև ժամկետը լրանալը մարելու ստացած փոխառութիւնը: Այդ դեպքում նրան լրիվ ամսվա հաշվով վերադարձվում եւ փոխառութեան մնացյալ ժամկետի համար վճարված տոկոսները:

Հողվ. 65.—Ի՞նչպիսի դեպքերում Ընկերութիւնն իրավունք ունի ժամկետից առաջ գանձելու տրված փոխատվութիւնը:

Ընկերութիւնն իրավունք ունի տրված փոխատվութիւնը պայմանաժամից առաջ գանձելու հետևյալ դեպքերում.—

ա) Յեթե փոխառուն ստացած փոխատվութիւնը ծախսել եւ վոչ ըստ նպատակի:

բ) Յեթե ընկերութիւնը գանձում եւ, վոր փոխառուն իր գործը տանում եւ անտնտեսավար կերպով կամ տանում եւ այնպես, վոր սպառում եւ նրա վճարունակութեան:

գ) Յեթե փոխառուն Ընկերութեան գործունեութեան շրջանում լուծարքի յե յենթաբերում իր տնտեսութիւնը:

դ) Յեթե փոխառուն ինքնակամ հեռանում եւ կամ հեռացվում եւ Ընկերութիւնից:

Հողվ. 66.—Արդէր տույժ գանձվում եւ անճշտապահ փոխառուններից՝ ինչպես հիմնական պարտքը մարելու վճարումներն ժամկետանցների դեպքում, նույնպես եւ փոխատվութիւնների տոկոսներն վճարման ժամկետանցների դեպքում:

Տույժ գանձվում եւ, ինչպես փոխատվութիւններն վճարման ժամկետանցների դեպքում, նույնպես եւ փոխատվութիւնների տոկոսներն վճարման ժամկետանցների դեպքում:

Ո՞վ եւ վորոշում տույժի չափը:

Տույժի չափը վորոշում եւ Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը:

Հողվ. 67.—Ո՞վ եւ, վոր նկատի ունենալով հարգելի պատճառները, հետաձգում եւ տրված վարկի վճարման ժամկետները:

Տրված փոխատվութեան վճարումը մինչև 6 ամիս հետաձգելու իրավունք տալիս եւ Ընկերութեան վարչութիւնը:

Ո՞վ եւ տալիս փոխատվութիւններն վճարումները 6 ամիս ավելի յետաձգելու, ինչպես նաև կրկնվող յետաձգումների իրավունքը:

Այդ յետաձգումները, հարգելի պատճառներն նկատի ունենալով, կարող են տրվել վարչութեան եւ Ընկերութեան խորհրդի միատեղ վորոշմամբ:

Ի՞նչպիսի դեպքերում կարող եւ թույլատրվել փոխատվութիւններն վճարումներն յետաձգումը:

Փոխատվութիւններն վճարումների յետաձգումը պիտի թույլատրել միայն հետևյալ բացառիկ դեպքերում.—

ա) Յերբ փոխառվին պատահել եւ անախատեսելի վորակ տարբերային աղետ կամ դժբախտութիւն (յերաշտ, կարկտահարութիւն, հրդեհ, անասունի սատկել եւ այլն):

բ) Յերբ վարչութեան կողմից փոխատվութիւնը տրված եւ նրան՝ այնպիսի ժամկետով, վոր բացահայտորեն չի համապատասխանում փոխատվութեան նպատակին:

այսինքն, յերբ վարչութեան մեղքով փոխառուն չի կարողացել փոխառութեանն իր տնտեսութեան մեջ շրջանառութեան մեջ դնել և նրանից ստացված արդյունքի հաշվին փոխառութեանը վերադարձնել:

դ) Յերբ փոխառուն հանդիսանում է չքավորական տնտեսութեան, վորից յիժե անմիջապես զանձվի փոխառութեանը, նրա տնտեսութեանը կարող է իսպառ քայքայվել և յիժե այդ դեպքում փոխառուն վարչութեանը կենդանացնի սպառիչ բացատրութեաններ այն պատճառների մասին, վորոնց շնորհիվ ինքը դժվարանում է ժամկետին մարելու փոխառութեանը:

Հոդվ. 68.—Ի՞նչ կարգով է ընկերութեանը կատարում ժամկետանց փոխառութեանների զանձումը:

Ընկերութեանը ժամկետանց փոխառութեանների զանձումը կատարում է դատական հրամանով՝ անվիճելի կարգով, Քաղաքացիական Դատավորութեան Որենսգրքի 210 հոդվածի համաձայն:

Բ. Պատճամուրհակների յեվ այլ պատճավորագրերի գեղջը

Հոդվ. 69.—Ի՞նչպիսի պարտավորականներ և այլ պարտավորագրեր ընկերութեանը կարող է գեղջել:

Ընկերութեանը կարող է գեղջել իր անդամների կողմից ներկայացված կարճ ժամկետային (մինչև 6 ամիս) մուրհակները և նրանց այլ պարտավորագրերը, վորոնց վրա անդամը պետք է մակագրի, թե ինքը հանձնարարում է, վոր ընկերութեանը ստանա գումարը:

Ի՞նչ սահմաններում է ընկերութեանը կատարում մուրհակների և այլ պարտավորագրերի գեղջը:

Զեղջը կատարվում է անդամի համար բացված վարկի սահմաններում:

Կարող է արդյոք ընկերութեանը ի հաշիվ արտադրական նպատակների համար նշանակված միջոցների, մուրհակների և այլ պարտավորագրեր գեղջել:

Վնչ, արտադրական նպատակների համար նշանակված վարկերի հաշվին Ընկերութեանը մուրհակներ և այլ պարտավորագրեր չպիտի գեղջի:

Պե՞տք է արդյոք բոլոր ընկերութեանները լայն կերպով կիրառեն մուրհակների գեղջը:

Վնչ, վորպես ընդհանուր կանոն, մուրհակներ պիտի գեղջել քաղաքներում գտնվող ընկերութեաններում, վորոնք իրենց անդամների թվում ունեն շատ կազմակերպութեաններ և՛ այդպիսի գործարքներ կատարելու համար՝ համապատասխան պատրաստականութեան ունեցող ապալարատ:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, վոր մուրհակների հետ գործ ունենալը պահանջում է հատուկ պատրաստականութեան, վորի բացակայութեան դեպքում կարող են տեղի ունենալ զանազան թյուրիմացութեաններ և նույնիսկ չարարկումներ:

Գ. Բանկային-միջնորդական գործարքներ.

Հոդվ. 70.—Ի՞նչպիսի բանկային-միջնորդական գործարքներ կարող է ընկերութեանը կատարել:

Ընկերութեանն ինչպես իր անդամներից, նույնպես և կողմնակի անձներից ու կազմակերպութեաններից վճարումների, ստացումների (դրանց թվում նաև զանձումների) և դրամական փոխադրութեաններ ի հանձնարարութեաններ կարող է ընդունել: Ի՞նչ նշանակութեան ունեն բանկային-միջնորդական գործարքները:

Բանկային-միջնորդական գործարքները նպաստում են քաղաքի և գյուղի միջև դրամական հաշիվների կանոնավոր կազմակերպման, վորը հանդիսանում է պետական կարևորագույն խընկերպման, վորը հանդիսանում է պետական կարևորագույն խընկերներից մեկը: Այդ գործարքների հսկողութեան տեսակետից, անհրաժեշտ է, վոր քաղաքի և գյուղի բոլոր հիմնարկներն ու կազմակերպութեաններն իրենց դրամական փոխադարձ հաշիվները կատարեն՝ գյուղում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեանների միջոցով և քաղաքում՝ նրանց վարկային աշխատանքները դեկավարող բանկային հիմնարկների միջոցով:

Ի՞նչ ոգուտ է ստանում Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեանը բանկային-միջնորդական գործարքներ կատարելով:

Բացի այդ գործարքներից ստացած յեկամուտներից, Ընկերութեանն ունի մի շարք այլ ոգուտներ:

Փորձը ցույց է տվել, վոր բանկային-միջնորդական գործարքները նպաստում են—ավանդների աճման, Ընկերութեան հաշիվելու աճման, Ընկերութեան անդամների թվի աճման, դրանք բարելավում և հեշտացնում են գյուղատնտեսական ապրանքների միջաման հետ կապված վճարումները, նպաստում են գյուղական

զբաղմունքների զարգացման և ընկերութայն գործունեություն շրջանում արտադրական ուժերի բարձրացման, Ընկերութայն յեկամուտների մեծացման և այլն:

Հոդվ. 71.—Կարող է արդյոք ընկերությունը գնել, վաճառել, պահել և իր վրա վերցնել արժեթղթերի կառավարման գործը: Կարող է, իր անդամների և կողմնակի անձանց հանձնարարությամբ:

Հոդվ. 72.—Վերոհիշյալ հանձնարարությունների կատարման համար ընկերությունը կարող է արդյոք վարձատրություն ստանալ:

Վարձատրություն կարող է ստանալ՝ ընկերության անդամների ընդհանուր ժողովի հաստատած կանոնները համաձայն:

Դ. Առլեվսրա-միջնորդական գործարհներ. արտադրական յեվ այլ ձեռնարկումներ

Հոդվ. 73.—Կարող է արդյոք ընկերությունը կատարել մատակարարման աշխատանքներ և ի՞նչպիսի առարկաներ ու նյութեր ընկերությունը պիտի մատակարարի իր անդամներին:

Ընկերությունն իր անդամների համար կարող է կատարել մատակարարման գործարհներ, մատակարարելով նրանց կենդանի և մեռյալ ինվենտար, սերմեր, պարարտանյութեր, ազնվացեղ անասուններ, ծառատունկեր, շինանյութեր, վառելանյութեր և արտադրական նշանակություն ունեցող այլ առարկաներ:

Կարող է արդյոք ընկերությունն իր անդամներին մատակարարել պարենավորման մթերքներ և լայն գործածություն առարկաներ:

Վոչ, չի կարող: Գյուղատնտեսական կոոպերացիայի կանոնադրություններ, վոր 1927 թ. հոկտեմբերի 3-ին հաստատված է Համառուսական կենտրոնական Գործադիր կոմիտեյի և ՌՍՖՆՀ Ժողովրդական կոմիսարների Սորհրդի կողմից, բոլոր գյուղատնտեսական կոոպերատիվ կազմակերպություններին վերապահված է այն իրավունքը, վոր նրանք կարող են իրենց անդամների համար կատարել պարենավորման մթերքների և լայն գործածություն առարկաների մատակարարման աշխատանքները, չի տարածվում Գյուղատնտեսական Վարկային կոոպերատիվ կազմակերպությունների վրա:

Հոդվ. 74.—Վանալրի ի՞նչպիսի գործարհներ կարող է կատարել ընկերությունը:

Ընկերությունը կարող է վաճառել իր անդամների տնտեսությունների մթերքներն ու աշխատանքի արտադրանքները:

Հոդվ. 75.—Ի՞նչ կարգով է ընկերությունը կատարելու վանալրի և մատակարարման գործարհները:

Ընկերությունն այդ գործարհները կատարում է ինչպես իր հաշվին, նույնպես և ըստ հանձնարարություն (կոմիսսիոն և այլն) և իր անդամների կամ պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների հաշվին, ըստ վորում այդ գործարհների վրա վոչ մի դեպքում չի կարելի ծախսել արտադրական վարկավորման համար նշանակված միջոցները:

Հոդվ. 76.—Ընկերությունն ի՞նչպիսի ձեռնարկումներ կարող է կազմակերպել (հիմնել):

Իր անդամների տնտեսական կարիքներին սպասարկելու համար Ընկերությունը կարող է հիմնել հետևյալ ձեռնարկումները.—

- ա) Ոժանդակ-արտադրական նշանակություն ունեցող ձեռնարկումներ (վարձակետեր, սերմազտիչ, տեսակավորման և բեղմնավորման ու կոնտրոլ կայաններ, վերանորոգման արհեստանոցներ և այլն):
- բ) Ինվենտար, արտադրության գործիքներ ու շինանյութեր և այլ առարկաներ պատրաստելու ձեռնարկումներ (աղյուսի, կղմինդր պատրաստելու գործարան, ատաղձագործարան և այլն):
- գ) Գյուղատնտեսական մթերքների և գյուղատնտեսական հումուլթներ վերամշակելու ձեռնարկումներ (Չրաղացներ, յուղ ու ձեթ, ոսլա և պանիր պատրաստելու գործարաններ, բանջարեղեններ չորացնելու գործարան, կտավատի և կանեփի նախնական վերամշակություն գործարան):
- դ) Գյուղատնտեսական ձեռնարկություններ (տնկարաններ, սածիլարաններ և այլն):
- ե) Ցեվ նման այլ ձեռնարկումներ:

Հոդվ. 77.—Ի՞նչ դեպքում ընկերությունը կարող է առևտրական ու արտադրական գործարհներ, ինչպես և ելքորոգիկացիայի ու մեխորացիայի ձեռնարկումներ կատարել:

Վերոհիշյալ բոլոր գործարհներն ընկերությունը կարող է կատարել իր հաշվով և հատուկ զբաղվուլներ իր առկայության դեպքում:

Վերոհիշյալ նպատակների համար կարող են արդյոք գործադրվել ընկերութայն մյուս դրամագրուխները:

Վճչ, Ընկերութայն մյուս դրամագրուխները վերոհիշյալ գործարքների համար ծախսվել չեն կարող:

Ի՞նչ գումարով և սահմանափակվում վերոհիշյալ գործարքների ու ձեռնարկումների համար Ընկերութայն պարտավորությունները:

Այդ գործարքների ու ձեռնարկումների համար պարտավորությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել նրանց համար կազմած հատուկ դրամագրուխների տասնապատիկի չափից:

Հոդվ. 78.— Ի՞նչ միջոցներով և ընկերությունն իրականացնում ազդեցությունը և կրթական ձեռնարկումներ (ցուցահանդեսներ, զբաղարաններ, դասընթացներ և այլն):

Վերոհիշյալ ձեռնարկներն ընկերությունն իրականացնում և հատուկ միջոցներով, վորոնք կազմվում են զուտ շահույթից այդ նպատակով կատարվող հատկացումներից, անդամների մուծումներից, նպաստներից և ընդհանուր ժողովի կողմից վորոշված այլ հատուկ աղբյուրներից:

Յե. Վարչակազմ յեվ Վերաստուգիչ հիմնարկներ

Հոդվ. 79.— Վարչական ի՞նչպիսի հիմնարկներ ունի Գյուղատնտեսական Վարկային ընկերությունը:

Ընկերութայն վարչական որգաններն են հանդիսանում ընդհանուր ժողովը, խորհուրդն ու վարչությունը:

Ի՞նչպիսի վերաստուգիչ որգան ունի ընկերությունը:

Վերաստուգիչ որգանը հանդիսանում և վերաստուգիչ հանձնաժողովը:

Ո՞վքեր չեն կարող ընտրվել խորհրդի, վարչութայն և վերաստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ:

Նրանք, ովքեր զրկված են խորհուրդների ընտրութայն իրավունքից:

Ո՞վքեր միաժամանակ չեն կարող մտնել խորհրդի վարչութայն և վերաստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ:

Նրանք, ովքեր կապված են ամուսնական կապերով կամ ազգակցական կապերով մինչև յերկրորդ աստիճանը ներառյալ:

1. Վ Ա Ր Զ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Հոդվ. 80.— Վարչությունն ընկերութայն վո՞ր մարմինն և հանդիսանում:

Վարչությունն հանդիսանում և ընկերութայն գործադիր մարմինը:

Վարչությունն ի՞նչպես և վարում ընկերութայն բոլոր գործերը:

Վարչությունը գործում և Ընկերութայն կանոնադրութայն և ընդհանուր ժողովի կողմից հաստատած կանոնների համաձայն:

Ընկերութայն գործերը վարելու համար վարչութայն անդամների կողմից տրվո՞ւմ և արդյոք հատուկ հավատարմագիր:

Վո՞չ, վարչությունն առանց հատուկ հավատարմագրի, անձնավորում և Ընկերութայնը՝ դրա բոլոր գործերի և հարաբերությունների մեջ:

Ի՞նչ աշխատանք և դրվում ընկերութայն վարչութայն վրա:

Վարչությունը պարտավոր և կատարել հետևյալը.—

ա) կազմել Ընկերութայն գործունեութայն պլանը, նախահաշիվները, գործառնությունների վերաբերյալ կանոններն ու հրահանգները և այդ բոլորը խորհրդի յեզրակացութայնը ներկայացնել ընդհանուր ժողովին ի հաստատություն:

բ) Ընկերութայն անունից պայմանագրեր կնքել, ի միջի այլոց գույքեր ձեռք բերելու, ոտարացնելու, գրավ դնելու և վարձակալութայն վերաբերյալ ակտեր կատարելու, և ընդհանուր ժողովի վորոշած սահմաններում փոխառություններ կնքել:

գ) Իրամ ընդունել և տալ, պահել Ընկերութայնը պատկանող և նրան վստահացած արժեքներն ու գույքը, ավանդներ ընդունել և տալ:

դ) Փոխատվություններ տալ:

յե) Գնել, վաճառել և ապահովագրել ապրանքներ և այլ գույքեր, այլ և կատարել այլ գործարքներ, վորոնք նախատեսված են Ընկերութայն կանոնադրութայնում:

զ) կառավարել Ընկերութայն արտադրական ձեռնարկումները:

ե) Ծառայողներ հրավիրել ու արձակել, ընդհանուր ժողովի հաստատած նախահաշիվի սահմաններում նրանց աշխատավարձ նշանակել:

ը) Ընկերութեան գործերի վերաբերյալ հավատարմագրեր տալ:

թ) Հոգևոտ Ընկերութեան գանձումներ կատարել և դատարանում Ընկերութեանը ներկայացված հայցերին պատասխանել:

ժ) Ընկերութեան հաշվապահութունն ու գործավարութունը վարել, հաշվետվութուն ներկայացնել և Ընկերութեան գործերով հարաբերութուն պահել բոլոր անձնավորութուններին ու հաստատութուններին հետ:

ի) Կազմել տարեկան հաշվետվութուն և խորհրդի ու վերատուգիչ հանձնաժողովի յեզրակայութեամբ ներկայացնել ընդհանուր ժողովին և հաստատութուն:

լ) Հրավիրել Ընկերութեան անդամների ընդհանուր, հերթական և արտակարգ ժողովներ և

խ) Կատարել Ընկերութեան կանոնադրութեան մեջ առանձնապես հիշատակված ու այդ կանոնադրութեան էյու-թյունից բխող այլ պարտականութունները և Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի վորոշումները:

Հոդվ. 81. — Ո՞ւմ ստորագրութեամբ ե կատարում վարչութունը ընկերութեան բոլոր գրավոր հարաբերութունները:

Վարչութեան նախագահի կամ անդամներից վորեւ մեկի ստորագրութեամբ:

Ո՞ւմ ստորագրութուններն են կրում ընկերութեան պարտավորագրերը, մուրհակները, չեկերն ու դրամական այլ փաստաթղթերը, ինչպես և ընկերութեան անունից տրվող լիազորագրերը (հավատարմագրերը):

Վերոհիշյալ փաստաթղթերը պիտի կրեն վարչութեան նախագահի (կամ նրա տեղակալի) և վարչութեան անդամներից մեկի, կամ վարչութեան կողմից նոտարական հավատարմագիր ունեցող անձնավորութեան ստորագրութունը:

Հոդվ. 82. — Ընկերութեան վարչութունն ի՞նչպիսի ցուցակներ ե պարտավոր պահել:

Ընկերութունը պարտավոր ե պահել հետևյալ ցուցակները. —

1. Ընկերութեան անդամների:

2. Առանձին անդամների հիմնական և հատուկ կապիտալների համար տրված մուծումների:

3. Ընկերութեան անդամներին բացված վարկերի չափի և

4. Անդամների՝ ընկերութեան պարտավորութունների նկատմամբ՝ ունեցած պատասխանատվութեան չափի:

Հոդվ. 83. — Վարչութունը յե՞րբ ե պարտավոր հրավիրել ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովը:

Գործառնական տարին վերջանալուց հետո, յերեք ամսից վոչ ուշ, վարչութունը պարտավոր ե հրավիրել Ընկերութեան անդամների ընդհանուր ժողով, քննելու և հաստատելու վարչութեան կազմած տարեկան հաշվետվութունը և լուծելու այլ ընթացիկ խնդիրներ:

Հոդվ. 84. — Պատասխանատու յեն արդյոք և ի՞նչպես են պատասխանատու վարչութեան անդամները իրենց պարտականութիւնները չկատարելու հետևանքով ընկերութեանը հասցրած բոլոր վնասների համար:

Իրենց ամբողջ գույքով՝ բոլորը միասին պատասխանատու յեն:

Ի՞նչ կարգով վարչութեան անդամները կարող են վարչութեան առանձին գործողութիւնների պատասխանատվութիւնից ազատվել:

Վարչութեան այն անդամները, վորոնք ցանկանում են իրենց ազատել վարչութեան առանձին գործողութիւնների պատասխանատվութիւնից, պիտի պահանջեն, վոր իրենց արած առանձին հայտարարութիւնները մտցվեն վարչութեան նիստերի արձանագրութիւններին մեջ, կամ իր ժամանակին գրավոր հայտարարութեամբ այդ գործողութիւնների մասին հայտնեն Ընկերութեան խորհրդին կամ վերատուգիչ հանձնաժողովին:

Հոդվ. 85. — Քանի՞ հոգուց և ի՞նչ կարգով ե կազմվում ընկերութեան Վարչութունը:

Վարչութիւնը կազմված ե յերեք հոգուց, վորոնց ընդհանուր ժողովը ընտրում ե Ընկերութեան անդամներից:

Վորքա՞ն ժամանակով ե ընտրվում ընկերութեան վարչութիւնը:

Ընկերութեան Վարչութիւնն ընտրվում ե յերկու տարով: Վարչութեան անդամներին թեկնածուներ ընտրվո՞ւմ են և ի՞նչ կարգով:

Վարչութեան հեռացող կամ բացակայող անդամներին փոխարինելու համար ընդհանուր ժողովը Ընկերութեան անդամներից ընտրում ե յերկու հոգուց վոչ պակաս թեկնածուներ:

Ո՞ւմ պիտի ընտրել վարչութեան անդամ:

Վարչության անդամ պիտի ընտրել ազնիվ, մաքուր, լուրջ և տնտեսավար մարդկանց, վորոնք ազգաբնակչության մեջ հեղինակութուն են վայելում, ունեն կոռպերատիվ և հասարակական գործունեություն ստատ և նվիրված են բանվորա-գյուղացիության զործին:

Հոդվ. 86.—Ի՞նչ կարգով ե ընտրվում վարչության նախագահը:

Ընդհանուր ժողովից ե կախված՝ վարչության նախագահ ընտրել ընդհանուր ժողովում, թե՛ թողնել, վոր վարչությունն ինքն իր միջից նախագահ ընտրի:

Ո՞վ ե ընտրում վարչության նախագահի տեղակալին և գանձապահին:

Ընկերության վարչությունը:

Հոդվ. 87.—Վարչության անդամների միջև պարտականությունները բաշխելիս, կարո՞ղ ե արդյոք միացվել հաշվետարի պարտականությունները գանձապահի պարտականությունների հետ:

Վո՞չ, վո՞չ մի կերպ չեն կարող:

Կարո՞ղ ե արդյոք վարչության գանձապահը միաժամանակ վարել նաև վորեւս այլ դրամարկղ:

Վո՞չ չի կարող:

Հոդվ. 88.—Վորքա՞ն հաճախ տեղի պիտի ունենան ընկերության վարչության նիստերը:

Շաբաթական մեկ անգամից վո՞չ պակաս:

Վարչության նիստերը յե՞րբ են համարվում կայացած:

Յերբ այդ նիստերին ներկա յեն վարչության յերեք անդամը, այդ թվում նախագահը կամ նրա տեղակալը:

Հոդվ. 89.—Յե՞րբ և ի՞նչ կարգով ե թեկնածուն փոխարինում վարչության անդամին:

Վարչության անդամի հիվանդության կամ բացակայության դեպքում նրան փոխարինում ե այն թեկնածուն, վոր ընտրության ժամանակ ավելի շատ ձայն ե ստացել:

Հոդվ. 90.—Վարչության նիստերին կարո՞ղ են ներկա լինել խորհրդի անդամները, վարչության և խորհրդի անդամների թեկնածուները, ինչպես և վերահսկիչ հանձնաժողովի անդամները: Կարող են ներկա լինել, սակայն առանց վճատկան ձայնի:

Հոդվ. 91.—Վարչության մեջ հարցերը ի՞նչ կարգով են լուծվում:

Հարցերը Վարչության մեջ լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճուղ և հանդիսանում:

Ի՞նչպես են ձեակերպվում վարչության վորոշումները:

Վարչության վորոշումները գրվում են արձանագրությունների գրքում և ստորագրվում են նիստին ներկա յեղող վարչության անդամների կողմից:

Հոդվ. 92.—Ի՞նչպես ե վարձատրվում վարչության անդամների աշխատանքը:

Ընդհանուր ժողովը վարչության անդամներին կարող ե վարձատրել կամ մշտական ուժիկի չափով, կամ վճարել առանձին նիստերի համար: Ընդ վորում, անհրաժեշտ ե, ըստ հնարածին նիստերի համար: Ընդ վորում, անհրաժեշտ և, ըստ հնարածին, բավականանալ վարչության մի վարձու անդամով, վոր կստանա մշտական վարձատրություն, իսկ վարչության մյուս անդամներին կամ բոլորովին չպիտի վճարել, կամ վճարել միայն նիստերին մասնակցելու համար:

Հոդվ. 93.—Ո՞վ ե քննության առնում և ընթացք տալիս վարչության նկատմամբ յեղած բողոքները:

Վարչության վերաբերմամբ յեղած բողոքները քննության ե առնում և ընթացք տալիս խորհուրդը կամ ընդհանուր ժողովը:

Հոդվ. 94.—Ի՞նչ կերպ կարող ե վարչության անդամը ժամանակից առաջ պաշտոնից հեռացվել:

Ընդհանուր ժողովը վորոշմամբ՝ վո՞ր դեպքում խորհուրդը կարող ե իր իշխանությամբ վարչության անդամին ժամանակավորապես գործից հեռացնել:

Վատնումի հայտնաբերման դեպքում խորհուրդն իրավունք ունի գործից հեռացնել վարչության վատնումի համար պատասխանատու անդամին, և միևնույն ժամանակ միջոցներ ձեռք առնել՝ ընդհանուր ժողով գումարելու:

2. ԽՈՐՀՈՒՐԴ

Հոդվ. 95.— Ի՞նչ պարտականություններ ունի ընկերության խորհուրդը:

Ընկերության խորհրդի պարտականություններն են հսկել, վոր վարչությունը գործերը նպատակահարմար կերպով վարի, և հետևել, վոր նա ի կատար ածի վարչության կանոնադրությունը, որենքները, հրահանգները և ընդհանուր ժողովի որինական վորոշումները:

Այդ նպատակով ի՞նչ իրավունքներ են վերապահված խորհրդին:

Խորհրդի համար պիտի բաց լինեն՝ դրամարկղը, փաստաթղթերը, հաշվապահութունը, գործավարութիւնը և ընդհանրապես Ընկերութեան բոլոր գործերը:

Մասնավորապես ի՞նչ աշխատանք և հանձնարարվում խորհրդին:

Խորհրդին հանձնարարվում է՝

ա) Ընդհանուր ժողովի հանձնարարութեամբ վարչութեան հետ միասին լուծել Ընկերութեան մեջ անդամներ ընդունելու, վարկեր բանալու, ավելացնելու կամ պակասեցնելու, փակելու և ապահովելու վերաբերյալ հարցերը:

բ) Ընկերութեան գործունեութեան վերաբերյալ վարչութեան կազմած ծրագիրը, յեւթց-մտից նախահաշիվները, գործառքների վերաբերյալ կանոնները, հրահանգներն ու ընդհանուր ժողովին ներկայացվելիք բոլոր առաջարկները, ինչպես և նրանց առթիվ տալ իր յեզրակացութիւնները:

գ) Քննել վարչութեան կազմած հաշվեկշիռները, հաշվետվութիւնները, մաքուր շահույթը բաշխելու և փաստերը ծածկելու նախագծերն ու դրանց առթիվ ընդհանուր ժողովին ներկայացնել իր յեզրակացութիւնները:

դ) Քննել խորհրդին ներկայացրած վարչութեան դեմ բողոքները և ընդհանուր ժողովին ներկայացնել այդ բողոքների վերաբերյալ յեզրակացութիւններն այն դեպքերում, յերբ այդ բողոքները դրվում են ընդհանուր ժողովում:

ե) Քննել այն բոլոր գործերը, վորոնք ընդհանուր ժողովի կամ վարչութեան կողմից տրվում են խորհրդին վորոշելու, ինչպես նաև լուծել Ընկերութեան կանոնադրութեամբ խորհրդի վրա դրվող այլ խնդիրներ:

Հոդվ. 96.—Կարո՞ղ ե արդյոք խորհուրդը՝ վարչութեանը ցուցումներ անել, նրա՝ ընկերութեան շահերին հակասող կամ անհամապատասխան գործողութիւնների վերաբերմամբ:

Վոչ միայն կարող ե, այլ և այդպիսի դեպքերում պարտավոր ե համապատասխան ցուցումներ տալ:

Ի՞նչ ե պարտավոր անել խորհուրդն այն դեպքերում, յերբ ընկերութեան գործերում հայտնաբերում ե եյական անկարգութիւններ կամ առարկումներ:

Այդպիսի դեպքերում խորհուրդը պարտավոր ե արտակարգ ընդհանուր ժողով հրավիրել:

Հոդվ. 97.—Քանի՞ հոգուց և ի՞նչ կարգով ե ընտրվում խորհուրդը:

Խորհրդի կազմը—5 անդամից վոչ պակաս և 2 թեկնածուներով—ընտրվում ե ընդհանուր ժողովում՝ Ընկերութեան այն անդամներից, վորոնք չեն մտնում վարչութեան և վերահսկիչ հանձնաժողովի կազմի մեջ:

Վորքան ժամանակով են ընտրվում խորհրդի անդամները:

Մեկ տարով:

Կարո՞ղ ե արդյոք խորհրդի անդամը ընկերութեան մեջ վարձով ծառայել:

Վոչ, չի կարող:

Ո՞ւմ պիտի ընտրել խորհրդի անդամ:

Խորհրդի անդամ պիտի ընտրել այնպիսի մարդկանց, վորոնք ազգաբնակչութեան աչքում հասարակական և քաղաքական հեղինակութիւն ունեն: Վերին աստիճանի ոգտակար կլինի, վոր յեթե Ընկերութեան անդամ են զանազան կազմակերպութիւններ—խորհրդի կազմի մեջ մտնելին այդ կազմակերպութեան ներկայացուցիչները, իսկ յեթե Ընկերութեանը մի շարք գյուղերի յե սպասարկում—լավ ե, վոր մեծ գյուղերի ներկայացուցիչները մտնեն խորհրդի մեջ:

Հոդվ. 98.—Ի՞նչ կարգով ե ընտրվում խորհրդի նախագահը:

Ընդհանուր ժողովից ե կախված խորհրդի համար նախագահ ընտրել, կամ խորհրդին վերապահել, վոր նա իր միջից իրեն նախագահ ընտրի:

Պատասխանատու յեն արդյոք խորհրդի անդամներն իրենց այն գործողութիւնների համար, վորոնց հետեվանքով ընկերութեանը վնաս ե կրել:

Խորհրդի անդամներն, ինչպես և վարչութեան անդամները, իրենց պարտականութիւնները խախտելու հետեանքով Ընկերութեանը պատճառած բոլոր վնասների համար պատասխանատու յեն միասնորեն, իրենց ամբողջ գույքով:

Ի՞նչպիսի դեպքերում և ի՞նչ կարգով ե թեկնածուն փոխարինում խորհրդի անդամին:

Խորհրդի անդամի հիվանդութեան կամ բացակայութեան դեպքում նրան փոխարինում եւ այն թեկնածուն, վորն ընտրութեան ժամանակ ավելի շատ ձայն եւ ստացել:

Ի՞նչ կարգով են հարցերը լուծվում խորհրդում:

Խորհրդում հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնութեամբ: Ձայների հավասար լինելու դեպքում՝ նախագահի ձայնը վճռող եւ հանդիսանում:

Ի՞նչ կարգով են ձեւակերպվում խորհրդի վորոշումները:

Խորհրդի վորոշումները գրվում են արձանագրութեաններէ գրքում եւ ստորագրվում են նիստին ներկա յեղող անդամներէ կողմից:

Կարո՞ղ են արդո՞ք խորհրդի անդամները իրենց աշխատանքի համար վարձատրութեան ստանալ:

Ընդհանուր ժողովը խորհրդի անդամներին, սահմանված կարգով, կարող եւ վարձատրութեան նշանակել: Ըստ վորում անհրաժեշտ եւ նկատի ունենալ, վոր Ընկերութեան միջոցներն ավելի տնտեսաբար ծախսելու նպատակով, սովորաբար խորհրդի անդամներն աշխատում են ձրիաբար կամ շատ փոքր վարձատրութեան են ստանում նիստերին մասնակցելու համար:

Հոդվ. 99.—Ո՞վ եւ ի՞նչ ժամկետներում են հրավիրում խորհրդի նիստերը:

Խորհրդի նիստերը հրավիրում եւ նրա նախագահը կամ տեղակալը՝ ըստ պահանջի, սակայն վոչ պակաս, քան յերկու ամիսը մեկ անգամ:

Հոդվ. 100.—Ի՞նչ կազմով խորհրդի նիստերը համարվում են կայացած:

Յեթե նիստերին ներկա յեն խորհրդի անդամների կեսը, այդ թվում նաև նախագահը կամ նրա տեղակալը:

Խորհրդի նիստերին կարող են լինել վարչութեան եւ վերահսկիչ հանձնաժողովի անդամները:

Կարող են ներկա լինել խորհրդակցական ձայնով:

Հոդվ. 101.—Ո՞ւմ եւ ի՞նչ կարգով եւ ներկայացվում ընկերութեան խորհրդի դեմ հարուցված բողոքները:

Խորհրդի վերաբերյալ բողոքները ներկայացվում են ընդհանուր ժողովին, սակայն վոչ այլ կերպ, քան նույն խորհրդի միջոցով, վորը պարտավոր եւ այդ բողոքները, իր բացատրութեաններէ հետ միասին, ներկայացնել առաջիկա ընդհանուր ժողովին:

Հոդվ. 102.—Ո՞վ եւ հրավիրում խորհրդի եւ վարչութեան նիստը, այն խնդիրները ընկելու համար, վորոնք ընկերութեան կանոնադրութեան համաձայն, ընկելու յեն վարչութեան ու խորհրդի միացյալ նիստում:

Այդ միացյալ նիստերը կարող եւ հրավիրել ինչպես վարչութեան նախագահը, նույնպես եւ խորհրդի նախագահը:

Քանի՞ անդամի ներկայութեամբ կարող են կայացված համարվել վարչութեան եւ խորհրդի միացյալ նիստերը:

Այդքան անդամների ներկայութեամբ, վորպիսին պահանջվում եւ վարչութեան եւ խորհրդի նիստերի համար առանձին-առանձին: Այսինքն՝ յերբ ներկա յեն վարչութեան յերեք անդամ, այդ թվում նախագահը կամ նրա տեղակալը եւ խորհրդի անդամների կեսը, այդ թվում նախագահը կամ նրա տեղակալը:

Այդպիսի նիստերին նախագահելու պարտավորութեաններն ո՞ւմ վրա յե դրվում:

Խորհրդի նախագահի կամ նրա տեղակալի:

Հարցերն ի՞նչ կարգով են լուծվում վարչութեան եւ խորհրդի միացյալ նիստերում:

Հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնութեամբ: Ձայների հավասար լինելու դեպքում՝ նախագահի ձայնը վճռող եւ հանդիսանում:

Ի՞նչպես են ձեւակերպում վարչութեան եւ խորհրդի միացյալ նիստերի վորոշումները:

Վարչութեան եւ խորհրդի միացյալ նիստերի վորոշումները գրվում են վարչութեան արձանագրութեաններէ գրքում:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԴՎԱԾ

Հոդվ. 103.—Ընդհանուր ժողովն ընկերութեան վո՞ր որգանն եւ հանդիսանում եւ ի՞նչ դեր եւ խաղում նա գյուղատնտեսական վարկային ընկերութեան գործունեութեան մեջ:

Ընկերութեան անդամներէ ընդհանուր ժողովը հանդիսանում եւ Ընկերութեան կառավարչութեան գերագույն որգանը:

Ընդհանուր ժողովներին մասնակցելով, Ընկերութեան յուրաքանչյուր անգամ իրականացնում եւ ընկերութեան գործերի կառավարչութեան մեջ մասնակցելու իր ունեցած իրավունքը եւ հայտնաբերում եւ իր ինքնագործունեութեանը: Իսկ անդամներէ ինքնագործունեութեանը, այսինքն՝ նրանց մասնակցութեանը բո-

լոր հարցերի վորոշումներին և Ընկերութեան գործունեութեան ընդհանուր ուղղութեան մեջ, — հանդիսանում է յուրաքանչյուր կոոպերատիվ կազմակերպութեան հիմքը:

Ի՞նչ խնդիրներ են յենթակա ընդհանուր ժողովի վորոշման:

- Ընդհանուր ժողովին յենթակա յեն հետևյալ խնդիրները՝
- ա) Ընկերութեան անդամների ընդունելութունն ու հեռացումը:
- բ) Վարչութեան, խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի անդամների և նրանց թեկնածուները ընտրութունը:
- գ) Ընկերութեան գործունեութեան ծրագրի քննութունն ու հաստատումը և, մասնավորապես, այն գործարքների վորոշումը, վոր կատարելու յե Ընկերութունը ու դրանց համար միջոցների աղբյուրների սահմանումը:
- դ) Հատուկ կապիտալների հիմնումը:
- յե) Վորոշում է Ընկերութեան փոխառութեան և շրջանառու միջոցների ընդհանուր առավելագույն գումարը և լուծում է հիմնական ու հատուկ կապիտալների համար փոխառութուն կնքելու հարցերը:
- զ) Ընկերութեան գործառքների և մասնավորապես ավանդների, փոխառութունների և առևտրական գործառքների վերաբերյալ անհրաժեշտ կանոնների քննութունն ու հաստատումը:
- ե) Ընկերութեան մեջ վարկի առավելագույն չափի վորոշումը:
- ը) Փոխառութուններից գանձվող տոկոսների, ինչպես և զանազան գործառքներից ստացվելիք կոմիսսիոն վարձատրութունների չափի վորոշումը:
- թ) Ավանդների համար վճարվելիք տոկոսների չափի վորոշումը:
- ժ) Ընկերութեան կառավարչութեան և գործառքների ծախսերի նախահաշիվների հաստատումը և մասնավորապես վարչութեան անդամների վարձատրութեան չափի վորոշումը:
- ի) Վարչութեան հաշվետվութունների քննութունն ու հաստատումը, շահույթի բաշխումը և վնասները ծածկելու կարգի վորոշումը:
- լ) Խորհրդի, վարչութեան և վերահսկիչ հանձնաժողովի անկանոն գործողութունների առթիվ յեղած բողոքների,

ինչպես և վերոյիշյալ որդանների անդամներին իրենց պաշտոններից ժամանակից առաջ հեռացնելու, նրանց՝ իրենց թերացումների և անկանոն գործունեութեան համար պատասխանատվութեան յենթարկելու հարցերի քննութունը:

- խ) Ընկերութեան կանոնադրութեան փոփոխման ու լրացման հարցերի քննութունը:
 - ծ) Պատգամավորական ժողովները հիմնումը և
 - կ) Ընդհանրապես, խորհրդի և վարչութեան իրավասութունների սահմաններից դուրս գտնվող բոլոր հարցերի քննութունն ու նրանց լուծումը:
- Ընկերութեան անդամների ի՞նչպիսի ընդհանուր ժողովներ են լինում:

Ընդհանուր ժողովները լինում են. —

- ա) Հերթական ժողովներ, վորպիսիք հրավիրում է վարչութունը տարեկան մեկ անգամ, գործառնական տարին վերջանալուց հետո՝ առաջին յերեք ամսվա ընթացքում, քննելու և հաստատելու անցյալ տարվա հաշվետվութունը և առաջիկա տարվա գործունեութեան ծրագրերը, խորհրդի, վարչութեան և վերահսկիչ հանձնաժողովի անդամների հերթական ընտրութուններ կատարելու և այլ հարցեր լուծելու համար:
 - բ) Արտակարգ ժողովներ, վորպիսիք հրավիրվում են ըստ անհրաժեշտութեան, վարչութեան հայեցողութեամբ և խորհրդի ու վերահսկիչ հանձնաժողովի գրավոր առաջարկութեամբ:
- Ընկերութեան անդամների վո՞ր մասի պահանջմամբ վարչութունը կարող է հրավիրել ընհանուր ժողով:
- Ընկերութեան անդամների մի տասերորդ մասի գրավոր պահանջով վարչութունը, սահմանված կարգով, պարտավոր է հրավիրել արտակարգ ընդհանուր ժողով:
- Ի՞նչպես են վարվում, յեթե վարչութունը ընկերութեան անդամների մի տասերորդի այդպիսի պահանջի դեպքում անգամ, յերկու շաբաթվա ընթացքում ընդհանուր ժողով չի հրավիրում:
- Այդ դեպքում ընդհանուր ժողով հրավիրում է Ընկերութեան խորհուրդը կամ վերահսկիչ հանձնաժողովը:
- Հողվ. 104. — Ո՞վ է սահմանում ընդհանուր ժողովներ հրարկելու կարգը:

Այդ կարգը սահմանում է հենց ինքը՝ ընդհանուր ժողովը: Ընդհանուր ժողովներ հրավիրելու այնուամենայնիվ ի՞նչ պիտի կարգ պիտի պահպանվի:

Ընդհանուր ժողովներ հրավիրելու պիտի պահպանել հետևյալ կարգը.—

ա) Ընդհանուր ժողովից առնվազը մի շաբաթ առաջ, ծանուցագրով Ընկերութեան անդամներին հայտնվում է ժողովի որվա և տեղի մասին:

բ) Վարչութեան շենքում ընդհանուր ժողովի որվա և տեղի մասին կախվում է հայտարարութուն, ուր մատնանըշվում է ընդհանուր ժողովում քննվելիք հարցերը (որակարգը):

Հոդվ. 105.—Ո՞վ իրավունք ունի ընդհանուր ժողովներում մասնակցելու:

Ընդհանուր ժողովներին վճռական ձայնով իրավունք ունեն մասնակցելու այն անձինք և հիմնարկութունները, վորոնք ընկերութեան անդամներ են:

Ի՞նչպես պիտի ապահովել չքավորութեան մասնակցութունն ընդհանուր ժողովներում:

Վորպեսզի չքավորութեան մասնակցութունը ընդհանուր ժողովներում ապահովվի, ամենից առաջ անհրաժեշտ է հրավիրվելիք ընդհանուր ժողովի մասին չքավորութեանը (ինչպես ընկերութեան անդամներին, նույնպես և կողմնակիներին) լայն կերպով հայտարարել, վորպիսի նպատակով պիտի դիմել կուսակցական բջիջներին, փոխոգկումներին, գյուղխորհուրդներին և այլոց աջակցութեանը:

Ապա անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վոր նախորդ չքավորութեան համար կազմակերպվեն հատուկ ժողովներ, վորտեղ պիտի քննութեան առնվի հրավիրվելիք ընդհանուր ժողովի որակարգը և ագիտացիա մղվի, վորպեսզի բոլոր չքավորները մասնակցեն ընդհանուր ժողովին*):

Այն դեպքում, յերբ ընկերութեան անդամը հնարավորութուն չի ունենում մասնակցելու ընդհանուր ժողովին, կարո՞ղ է արդո՞ք տվյալ անդամը իրավունք տալ մեկ ուրիշին՝ վճռական ձայնի իրավունքով մասնակցելու ժողովին:

* Չքավորական ժողովներին և խմբերին մասին մանրամասնութուններն տես Բ. Վ. Ուլպիի «Չքավորական անտեսութունների կոոպերացումն ու վարկավորումը» գրքույկում: Հրատարակութուն կինգոստոյեղի:

Կարող է տալ, սակայն այդ մասին ընկերութեան վարչութեանը հատուկ հայտարարութուն ներկայացնելով միայն, ըստ վորում, այդ իրավունքը անսպասան կարող է տրվել միայն ծխի անդամին կամ Ընկերութեան մատնանըշված անդամի ընտանիքին:

Ընկերութեան անդամ կազմակերպութուններն ինչպես են մասնակցում ընդհանուր ժողովին:

Կազմակերպութունները մասնակցում են իրենց ներկայացուցիչներին միջոցով, այդ ներկայացուցիչների թվի մասին վերը մենք արդեն խոսեցինք:

Ընդհանուր ժողովին կարո՞ղ են մասնակցել այնպիսի անձինք, վորոնք ընկերութեան անդամ չեն:

Վարչութեան կամ խորհրդի հրավերով, — յեթե ընդհանուր ժողովը դեմ չէ, — կարող են մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով: Ընդհանուր ժողովին ընկերութեան վոչ-անդամ գյուղացիներին ներկայութունը, մասնավորապես, ցանկալի յե: Մասնակցելով նրանք կհամոզվեն ընկերութեան մեջ մտնել, վորով և նպաստած կլինենք գյուղացիութեան կոոպերացման: Այդ չքավոր կողմից առանձնապես կարևոր է չքավոր ու սակավահող գյուղացիութեան մասնակցութունը:

Հոդվ. 106.— Անդամներից քանի՞ հոգի պիտի ներկա լինեն, վորպեսզի ընդհանուր ժողովը կայացված համարվի:

Յեթե ներկա յեն բոլոր անդամների մի հինգերորդից վոչ պակաս մասը:

Ներկա յեղող անդամների ի՞նչպիսի նվազագույն թվի դեպքում ընդհանուր ժողովն որինական է համարվում: 20 անդամ:

Յերբ ժողովին ներկա յեն առնվազն 20 անդամ, ի՞նչպիսի հարցերի վորոշման դեպքում է պահանջվում, վոր ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում ներկա լինեն ընկերութեան բոլոր անդամների կեսից վոչ պակասը:

Յեթե ժողովը հրավիրված է վորոշելու հետևյալ հարցերը.—

- ա) Անդամներ հեռացնելու:
- բ) Փայտվճարների չափերը փոփոխելու:
- գ) Հիմնական կամ հատուկ կապիտալներին համար պարտավորեցուցիչ վճարներ սահմանելու:
- դ) Պատգամավորական ժողովներ հիմնելու:
- յե) Կանոնադրութունը փոփոխելու, և

զ) Ընկերութեան գործունեութիւնը դադարեցնելու,—այդ դեպքում ընդհանուր ժողովը կայացած ե համարվում, յետե ներկա յեն բոլոր անդամների կեսից վոչ պակասը:

Հոդվ. 107.—Ի՞նչպէս են վարվում, յետե ընդհանուր ժողովը նշանակած որը չի հավաքվում անդամների պահանջովոյ թիվը:

Յետե ընդհանուր ժողովը նշանակած որը ներկա յեն 30 հոգուց պակաս, ապա տվյալ ժողովը հայտարարվում ե չկայացած ե նշանակվում ե յերկրորդ ժողով, վորը—անկախ ներկա յեղող անդամների թիվից—համարվում ե կայացած:

Յե՞րբ կարող ե նշանակվել յերկրորդ ընդհանուր ժողովը:

Առաջին անգամ չկայացած ժողովից հետո՝ մի շաբաթից վոչ շուտ ե մի ամսից վոչ ուշ:

Կիրարկելի՞ յե արդյոք այս կանոնը ե այն դեպքերում, յերբ ընդհանուր ժողովը հրավիրվում ե վորոշելու այն հարցերը, վորոնք պահանջում են բոլոր անդամների կեսից վոչ պակասի ներկայութիւնը:

Վի՛չ, կիրարկելի չե:

Ի՞նչպէս են վարվում այդ դեպքում:

Վերը թված հարցերը վորոշվում են յերկրորդ ընդհանուր ժողովում, բոլոր անդամների վոչ պակաս, քան մի յերրորդի մասնակցութեամբ միայն:

Իսկ յետե յերկրորդ ընդհանուր ժողովին նույնպէս անդամների անհրաժեշտ թիվ չհավաքվի՞:

Այն դեպքում խորհուրդը՝ Ընկերութեան վարչութեան հետ միասին, պահպանելով վերոհիշյալ համապատասխան ժամկետներն ու կարգը, անդամների ժողով ե հրավիրում ըստ առանձին շրջանների:

Ի՞նչպիսի հարցեր կարող են քննվել ե վորոշվել ընկերութեան ընդհանուր ժողովում ե շրջանային ժողովներում:

Միայն այն հարցերը, վորոնք նշված են յեղել առաջին անգամ հրավիրված, սակայն չկայացած ընդհանուր ժողովի որակարգում:

Ո՞վ ե վորոշում շրջանները, վորպէսզի վերոհիշյալ դեպքում կատարվեն շրջանային ժողովները:

Շրջանները վորոշում են Ընկերութեան վարչութիւնն ու խորհուրդը միատեղ:

Հոդվ. 108.—Ո՞վ ե բաց անում ընկերութեան ընդհանուր ժողովը:

Ընդհանուր ժողովը բաց ե անում Ընկերութեան խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը:

Ընդհանուր ժողովին ո՞վ ե նախագահում:

Ընդհանուր ժողովին նախագահում են, հատկապէս դրա համար ընդհանուր ժողովի կողմից Ընկերութեան անդամների միջից ընտրված անձինք:

Ընդհանուր ժողովի նախագահութեան մեջ կարո՞ղ են արդյոք ընտրվել վարչութեան ե վերահսկիչ հանձնաժողովի անդամները:

Վի՛չ, չեն կարող:

Հոդվ. 109.—Ընդհանուր ժողովում ընկերութեան յուրաքանչյուր անդամ քանի՞ վճուական ձայն կարող ե ունենալ:

Ընկերութեան յուրաքանչյուր անդամ, այդ թիվում նաև կոպեքատիվ կազմակերպութիւնները, անկախ նրանց ունեցած փայերի թիվից,—կարող ե ունենալ միայն մեկ վճուական ձայն:

Այս ընդհանուր կանոնից ո՞ւմ համար կարող ե բացառութիւն առվել:

Ընկերութեան կազմի մեջ մտնող գյուղատնտեսական կոլլեկտիվների համար, վորոնց իրավունք ե տրվում Ընկերութեան ընդհանուր ժողովում վճուական ձայնի իրավունքով ունենալ մի քանի ներկայացուցիչ:

Գյուղատնտեսական կոլլեկտիվների համար ո՞վ ե վորոշում այդպիսի ներկայացուցիչների (ձայների) թիվը:

Ընկերութեան ընդհանուր ժողովը, վորն այն դեպքում ուշադրութեան ե առնում ինչպէս տվյալ միութեան անդամների թիվը, նույնպէս ե այլ հանգամանքներ:

Իրավունքը ունե՞ն արդյոք ընկ. ընդհանուր ժողովին անհատական անդամների համար հաստատված ընդհանուր կարգով մասնակցել ընկերութեան անդամ գյուղատնտեսական կոլլեկտիվների առանձին անդամները (յետե ի հարկե կոլլեկտիվի այդ առանձին անդամներն ընկերութեան անդամ են):

Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովում նրանք իրավունք ունեն մասնակցելու Ընկերութեան բոլոր անդամների հետ հավասարապէս:

Հոդվ. 110.—Ընդհանուր ժողովին ի՞նչ իրավունքներով են մասնակցում ընկերութեան վարչութեան, խորհրդի ե վերահսկիչ հանձնաժողովի անդամները:

Ընկերութեան մնացած անդամների իրավունքով:

Ընդհանուր ժողովում ի՞նչպիսի հարցերի քննութեան դեպքում ե, վոր վարչութեան, խորհրդի և վերահսկիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են առանց վճռական ձայնի իրավունքի:

Հետևյալ հարցերի քննութեան դեպքում.—

ա) Նրանց գործունեութեանը գնահատելիս և նրանց հաշվետվութեանը հաստատելիս:

բ) Նրանց համար վարձատրութեան սահմանելիս:

գ) Ժամանակից շուտ նրանց հեռացնելու և

դ) Նրանց դատական պատասխանատվութեան յենթարկելու:

Հոդ. 111. Ընկերութեան յուրաքանչյուր անդամ ի՞նչպես պիտի վարվի, յիժե նա գտնում ե, վոր ընդհանուր ժողովի վորոշումները հակասում են որենքին, կանոնադրութեանը կամ ընկերութեան շահերին:

Նա պիտի իր առարկութեանը հայտնի, վոր մտցվում ե ժողովի արձանագրութեան մեջ:

Հոդվ. 112.—Ընդհանուր ժողովում վորոշումներն ի՞նչ կարգով են ընդունվում:

Ընդհանուր ժողովում վորոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնութեամբ:

Ի՞նչպիսի հարցերի վորոշման դեպքում ե, վոր պահանջվում ե ընդհանուր ժողովի որինական կազմի յերկու յերրորդից վոչ պակաս մեծամասնութեան ձայնը:

Հետևյալ հարցերը վճռելիս.—

ա) Անդամներ հեռացնելու:

բ) Փայովճարների շափը փոփոխելու:

գ) Հիմնական կամ հատուկ կապիտալները համար պարտավորեցուցիչ մուծումներ սահմանելու:

դ) Պատգամավորական ժողովներ հիմնելու:

յե) Կանոնադրութեան փոփոխելու, և

զ) Ընկերութեան գործունեութեանը դադարեցնելու:

Հոդվ. 113.—Ի՞նչպես են ձևակերպվում ընդհանուր ժողովի վորոշումները:

Ընդհանուր ժողովի վորոշումները գրվում են առանձին գրքույկում և ստորագրվում են ըողհանուր ժողովի նախագահի և

քարտուղարի կողմից, խորհրդի և վարչութեան ներկա գտնվող անդամների կողմից և Ընդհանուր ժողովի կողմից, այդ նպատակով ընտրված Ընկերութեան վոչ պակաս, քան յերեք անդամի կողմից: Արձանագրութեանը կցվում ե ժողովին ներկա Ընկերութեան բոլոր անդամների ցուցակը: Այդ ցուցակը պիտի վավերացված լինի վերոհիշյալ անձնավորութեանների ստորագրութեամբ:

Արդյոք ընկերութեան բոլոր անդամների համար պարտավորեցուցի՞չ են ընդհանուր ժողովի վորոշումները:

Ընդհանուր ժողովի վորոշումները պարտավորեցուցիչ են Ընկերութեան բոլոր անդամների համար, ինչպես ներկա յողոհների, նույնպես և բացակասների:

Վո՞ր դեպքում ե թույլատրվում պատգամավորական ժողովներ կազմակերպելը:

Յեթե Ընկերութեան անդամների թիվը 300 մարդուց ավելի յե, ապա ընդհանուր ժողովը, առանձին վորոշմամբ, Ընկերութեան կանոնադրութեանը լրացնելու կարգով, կարող ե պատգամավորական ժողովներ հիմնել:

Ո՞վ ե ընտրում պատգամավորական ժողովները:

Պատգամավորական ժողովներն ընտրում են Ընկերութեան անդամները՝ ընդհանուր կամ շրջանային ժողովներում:

Վո՞րտեղ են հավաքվում շրջանային ժողովները:

Շրջանային ժողովները հավաքվում են ըստ առանձին գյուղերի, ըստ գյուղխմբերի կամ գյուղամասերի, վորոնց սպասարկում ե Գյուղատնտեսական Վարկային Ընկերութեանը:

Քա՞նի հոգի պատգամավոր են ընտրում շրջանային ժողովները:

Տվյալ շրջանում ապրող Ընկերութեան անդամների թվի համեմատական քանակով:

Ի՞նչպես են տարվում պատգամավորական ժողովների պարապմունքները:

Ընդհանուր ժողովների համար սահմանած կարգով:

Վո՞ր դեպքումն ե պատգամավորական ժողովը համարվում կայացած:

Յերբ բոլոր պատգամավորների կեսից վոչ պակասը ներկայ են:

Բացի պատգամավորներից, ո՞վքեր դարձյալ իրավունք ունեն վճռական ձայնով մասնակցելու պատգամավորական ժողովներին:

նշված են Ընկերութեան կանոնադրութեան մեջ և բըր-
խում են վերահսկիչ հանձնաժողովի ելուցումն ից:

դ) Ընդհանուր ժողովին հաշվետվութեան ներկայացնել՝
տարվա ընթացքում իր կատարած աշխատանքի մասին:

Պարտավոր ե արդյոք վարչութիւնը վերահսկիչ հանձնա-
ժողովին աջակցութիւն ցույց տալ և ի՞նչպես:

Պարտավոր ե աջակցութիւն ցույց տալ՝ վերահսկիչ հանձ-
նաժողովին անհրաժեշտ տեղեկութիւններ, փաստաթղթեր և այլն
տրամադրելով:

Հոդվ. 115.—Քանի՞ անգամից ե ըաղկացած վերահսկիչ
հանձնաժողովը և ի՞նչ կարգով են ընտրվում նրանք:

Վերահսկիչ հանձնաժողովը բաղկացած ե յերեք անգամից
և յերկու թեկնածուից, վորոնք ընտրվում են ընդհանուր ժողո-
վում՝ ընկերութեան անդամներից:

Վորքան ժամանակով են ընտրվում վերահսկիչ հանձնա-
ժողովի անդամները:

Մեկ տարով:

Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ կարող են ընտրվել
Խորհրդի և վարչութեան կազմին պատկանող անձինք, ինչպես և
ընկերութեան մեջ ծառայողները:

Վնչ, չեն կարող ընտրվել:

Վերահսկիչ հանձնաժողովի անդամներն իրենց պարտակա-
նութիւնները խախտելու և իրենց ապորինի գործունեութեամբ
ընկերութեանը վնասներ պատճառելու համար ի՞նչպես են պա-
տասխանատու դառնում:

Պատասխանատու յեն բոլորը միասին՝ իրենց ամբողջ
գույքով:

Ի՞նչպես ե վարվում վերահսկիչ հանձնաժողովի այն ան-
դամը, յերբ, վերահսկիչ հանձնաժողովի առանձին գործողու-
թիւնների համար չի ցանկանում պատասխանատու լինել:

Վերահսկիչ հանձնաժողովի այդ անդամը իրավունք ունի
պահանջելու, վոր իր արած առանձին հայտարարութիւնը մու-
ծվի վերահսկիչ հանձնաժողովի նիստի արձանագրութեան մեջ,
կամ իր ժամանակին, գրավոր հայտարարութեամբ, այդ առան-
ձին գործողութիւնների մասին իրագեկ ե անում Ընկերութեան
խորհրդին:

Ի՞նչպես ե ընտրվում վերահսկիչ հանձնաժողովի նախա-
գահը:

Անդամների ընդհանուր ժողովից ե կախված վերահսկիչ
հանձնաժողովի համար նախագահ ընտրել, կամ իրեն, վերահս-
կիչ հանձնաժողովին թողնել իր միջից նախագահ ընտրելու:

Յե՞րբ և ի՞նչպիսի կարգով թեկնածուները կարող են փո-
խարինել վերահսկիչ հանձնաժողովի անդամներին:

Վերահսկիչ հանձնաժողովի անդամի հիվանդութեան կամ
բացակայութեան դեպքում նրան փոխարինում ե այն թեկնա-
ծուն, վորը ստացել ե ընտրական ավելի մեծ թվով ձայն:

Ի՞նչպես են վորոշվում հարցերը վերահսկիչ հանձնաժողովի
նիստերում:

Հարցերը վորոշվում են ձայների պարզ մեծամասնութեամբ:
Ձայների հավասարութեան դեպքում՝ նախագահի ձայնը վճռող ե:
Ի՞նչպես են ձևակերպվում վերահսկիչ Հանձնաժողովի վո-
րոշումները:

Վերահսկիչ հանձնաժողովի վորոշումները գրվում են արձա-
նագրութիւնների գրքում և ստորագրվում են նիստին ներկա
յեղող անդամների կողմից:

Հոդվ. 116.—Ի՞նչպես ե վարվում վերահսկիչ հանձնաժո-
ղովը, յեթե ընկերութեան գործերում հայտնաբերում ե անկա-
նոնութիւններ ու թերութիւններ:

Հայտնաբերված անկանոնութիւնների և թերութիւնների
մասին վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր ե հայտնել Ընկե-
րութեան վարչութեանն ու խորհրդին:

Իսկ ի՞նչպես պիտի վարվի վերահսկիչ հանձնաժողովն
այն դեպքում, յեթե ընկերութեան գործերում հայտնաբերվում ե
ավելի եյական անկանոնութիւններ կամ չարարկումներ:

Այդ դեպքում վերահսկիչ հանձնաժողովն այդ մասին վար-
չութեանն ու խորհրդին հայտնելուց զատ, պարտավոր ե հրավի-
րել արտակարգ ընդհանուր ժողով:

Հոդվ. 117.—Ո՞վ ե հրավիրում վերահսկիչ հանձնաժողովի
նիստերը և ի՞նչ ժամկետներում:

Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը հրավիրում ե նախա-
գահը՝ ըստ հարկի, առնվազն ամիսը մեկ անգամ:
Կարող ե արդյոք վերահսկիչ հանձնաժողովը ստուգման
գործողութիւնը հանձնարարել իր առանձին անդամներին:

Կարող ե:

Ի՞նչ կարգով վերահսկիչ հանձնաժողովը պիտի ձևակերպի
իր բոլոր գործողութիւնները:

Վերահսկիչ հանձնաժողովն իր բոլոր գործողությունները մասին հատուկ գրքում գրանցումներ և անում:

Ո՞ւմ և ի՞նչ կարգով և վերահսկիչ հանձնաժողովն իր յեզրակացությունները տալիս:

Վերահսկիչ հանձնաժողովն իր յեզրակացությունները հայտնում և ընդհանուր ժողովին, նախորոք այդ մասին իրազեկ անելով Ընկերության վարչությանը:

Հոդվ. 118.—Ո՞ւմ և ի՞նչ կարգով են բողոքում վերահսկիչ հանձնաժողովի վրա:

Վերահսկիչ հանձնաժողովի վրա բողոքներ տրվում են ընդհանուր ժողովին, սակայն վոչ այլ կերպ, քան նույն վերահսկիչ հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է բողոքն իր բացատրությունների հետ միասին՝ ներկայացնել ընդհանուր ժողովին:

Հոդվ. 119.—Կարող են արդյոք վերահսկիչ հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքի համար վարձատրություն ըստանալ:

Ընդհանուր ժողովի վորոշմամբ կարող են ստանալ, սակայն սահմանափակ չափերով, նկատի ունենալով Ընկերության ծախսերը կրճատման անհրաժեշտությունը:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՎՈՒԹՅՈՒՆԸ, ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՅԵՎ ՎՆԱՍՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդվ. 120.—Պարտավոր է արդյոք ընկերությունը հաշվեմատյաններ պահելու:

Պարտավոր է պահել:

Ի՞նչ են գրվում ընկերության հաշվեմատյաններում:

Ընկերության հաշվեմատյաններում գրվում են.—

- ա) Ընկերության բոլոր շրջանառությունների վերաբերյալ մուտքն ու յեւքը և դրամարկղի կանխիկ մնացորդը:
- բ) Ընկերության յուրաքանչյուր տեսակի շրջանառության մուտքն ու յեւքն՝ առանձին-առանձին:
- գ) Յուրաքանչյուր առանձին անհատի և հիմնարկության հետ ընկերության ունեցած հաշիվների դրությունը, և
- դ) Հիմնական, պահեստի և հատուկ դրամագրուխների հաշիվների դրությունը:

Ի՞նչ լեզվով և տարվում ընկերության հաշվապահությունն ու գործավարությունը:

Այն լեզվով, վորը պարտավորեցուցիչ է Ընկերության գործունեության շրջանում:

Հոդվ. 121.—Յե՞րբ և սկսվում և վերջանում ընկերության գործառնական տարին:

Գործառնական տարին սկսվում է հոկտեմբերի 1-ին և ավարտվում է սեպտեմբերի 30-ին:

Հոդվ. 122.—Ի՞նչ և պարտավոր անել վարչությունը գործառնական տարին վերջանալուց հետո:

Վարչությունը պարտավոր է, առանց թերությունները թագնելու, կազմել տարեկան հաշվետվությունը, ստորագրել այն և ապա այդ հաշվետվությունը զեկուցել ընդհանուր ժողովին:

Ի՞նչ պիտի իր մեջ պարունակի տարեկան հաշվետվությունը:

Տարեկան հաշվետվությունն իր մեջ պիտի պարունակի տվյալներ՝ Ընկերության գործունեության մասին և մասնավորապես—հաշվեկշիռը, շահույթի և ֆլասի հաշիվը, տարվա ընթացքում կատարված շրջանառությունների (յուրաքանչյուր շրջանառություն վերաբերյալ առանձին) մուտքը, յեւքն ու մնացորդը, ության վերաբերյալ առանձին) մուտքը, յեւքն ու մնացորդը, նշումներ՝ Ընկերության անդամների թվի մեջ յեղած փոփոխությունների և այն ընդհանուր գումարի մասին, վոր Ընկերության թյունների և այն ընդհանուր գումարի վերաբերյալ պատասխանատու յեն անպարտավորությունների վերաբերյալ պատասխանատու յեն անգամները, ինչպես նաև յետաձգված ու ժամկետանց փոխավորությունների թիվն ու գումարը, և նրանց յետ ստանալու վստահելության վերաբերյալ՝ վարչության յեզրակացությունները:

Ի՞նչն և կոչվում ընկերության մաքուր շահույթը:

Ի՞նչն և կոչվում ընկերության մաքուր շահույթը համարվում է հաշվետու Ընկերության մաքուր շահույթը համարվում է հաշվետու տարվա ընդհանուր յեկամուտի գումարի մնացորդը, նրանից գուրս գալով վարչության և Ընկերության գործառնական վերադրերյալ բոլոր ծախքերը, ինչպես և կոպերատիվ վճարելիքները և Ընկերության ֆլասները:

Հոդվ. 123.—Գործառնական տարին վերջանալուց հետո վարչությունը վո՞րքան ժամանակամիջոցում պիտի կազմի տարեկան հաշվետվությունը և ներկայացնի այն ընդհանուր ժողովին ի ըննություն և ի հաստատություն:

Գործառնական տարին վերջանալուց հետո՝ յերեք ամսից վոչ ուշ:

Ի՞նչպես են վարվում այն դեպքում, յեթե նշված ժամանակամիջոցում վարչությունը չի կազմում տարեկան հաշվետվությունը:

Այդ դեպքում վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է իր հսկողութեամբ տարեկան հաշվետվութուն կազմելը հանձնարարել այլ անձանց:

Հոդվ. 124.—Ի՞նչ է պարտավոր անել վերահսկիչ հանձնաժողովը, նախքան վարչութեան կողմից տարեկան հաշվետվութունը ընդհանուր ժողովին ներկայացնելը:

Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է տարեկան հաշվետվութունը հաշվեմատյաններով ու փաստաթղթերով ստուգել, նույն հաշվետվութեան վրա գրել իր յեզրակացութիւնները և վավերացնել վերահսկիչ հանձնաժողովի ստուգման՝ ներկա յեզող անդամների ստորագրութեամբ:

Կարող են արդյոք ընկերութեան անդամները, մինչեւ հերթական ընդհանուր ժողովը, ծանոթանալ հաշվետվութեան հետ:

Մինչև հերթական ընդհանուր ժողովը, վոչ ուշ, քան յերկու շաբաթ առաջ, վորոշ ժամերին վարչութեան մեջ հաշվետվութունը պիտի տրամադրվի ընկերութեան անդամներին՝ ծանոթանալու համար:

Հոդվ. 125.—Հաշվետվութունը հաստատելու ժամանակ, ստացված մաքուր շահույթից ի՞նչպիսի պարտավորեցուցիչ մասնահանումներ պիտի արվեն:

Մաքուր շահույթից 25⁰/₁₀₀ վոչ պակաս պիտի հատկացվի ընկերութեան հիմնական դրամագլխին և 20⁰/₁₀₀՝ պահեստի դրամագլխին:

Ի՞նչպես է բաշխվում մաքուր շահույթի մնացած մասը:

Շահույթի մնացած մասը ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը կարող է գործադրել հատուկ դրամագլուխ կազմելու այն գործառքների ու ձեռնարկումների համար, վորոնք նախատեսված են ընկերութեան կանոնադրութեամբ, վճարել իր փայական մուծումներն այն կոոպերատիվ միութիւններին և այլ կազմակերպութիւններին, վորոնց ընկերութիւնը, ընդհանուր ժողովի վորոշմամբ, անդամ է կամ փայատեր, այլ և գործադրել կոոպերատիվ, կրթական և հանրագուտ նպատակների համար (չըքավորութեան կոոպերացման, դպրոցների, մսուրների ֆոնդի և այլն):

Կարելի՞ յէ արդյոք մաքուր շահույթից մասնահանումներ կատարել ընկերութեան փայերին դեվիդենտներ վճարելու և վորքան:

Դրամագլուխներին, վերոհիշյալ մասնահանումները անելուց հետո, փայերին դեվիդենտներ տալու համար կարելի յէ հատկացնել մաքուր շահույթի 20⁰/₁₀₀-ից վոչ ավելին:

Ընկերութեան յուրաքանչյուր անդամին վորքան դեվիդենտ կարելի յէ տալ:

Փաստորեն վճարած փայական մուծմանը կարելի յէ տալ 120⁰/₁₀₀-ից վոչ ավելի:

Հոդվ. 126.—Վորտեղից պետք է ծածկվի այն վնասը, վոր գործառնական տարվա վերջին կարող է ունենալ ընկերութիւնը:

Վնասը ծածկվում է պահեստի կապիտալից:

Իսկ յեթէ այդ ձեւով վնասը չի՞ ծածկվում:

Այդ դեպքում ընդհանուր ժողովը իրավունք ունի պակասող գումարը բաշխել ընկերութեան անդամների մեջ՝ նրանց լրացուցիչ պատասխանատվութեան համապատասխան, նշանակելով ժամկետ վոչ ուշ, քան տարվա վերջը, յուրաքանչյուրն իր բաժինը վճարելու համար:

Ի՞նչպես է վարվում վարչութիւնն այն դեպքում, յերբ ընկերութեան անդամը պարտքը ծածկելու համար սահմանված ժամկետին չի վճարում իր բաժինը:

Այդ դեպքում վարչութիւնը կարող է չվճարող անդամի փայը, ըստ նշված տարաբաշխման գումարի, վերցնել և հաշվել վորպես նրանից դանձվող բաժին:

Ի՞նչպես է ծածկվում այն վնասը, վորը ստացվել է ընկերութեան հատուկ դրամագլուխներով գործառքներ կատարելու հետեւանքով:

Այդ վնասը նույնպես ծածկվում է պահեստի դրամագլխից, իսկ չծածկված մասը՝ անց է կացվում համապատասխան հատուկ կապիտալի հաշվին:

Ո՞ւմ կողմից և ի՞նչ կարգով է ծածկվում այն վնասը, վոր տեղի յէ ունենում վարչութեան անկանոն գործունեութեան կամ անուշադրութեան հետեւանքով:

Այդ վնասը ծածկում են վարչութեան հանցավոր անդամները, իսկ նրանցից ստացվող դրամները գնում են լրացնելու այն դրամագլուխը, վորից վնասը դուրս է գրված, կամ վերաայն դրամագլուխը, վորից վնասը դուրս է գրված, կամ վերահսկիչ հանձնաժողովին, վորոնք վնասը զարձկում է ընկերութեան այն անդամներին, վորոնք վնասը ծածկել է յին իրենց մուծումներով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդվ. 127.— Ընկերություն պարտապաններն ի՞նչ կարգով են բավարարվում:

Ընդհանուր կարգով գործող որենսդրության հիմունքով, այն կանոնների պահպանմամբ, վոր նախատեսված են Ընկերության կանոնադրության համապատասխան հոդվածներում:

Հոդվ. 138.— Ընկերություն պարտապանների պրետենզիաները (պահանջները) բավարարելիս ի՞նչ է պարտավոր անել ընկերությունը:

Ընկերությունը պարտավոր է անձեռնմխելի թողնել այնքան գումարի կայք (կանխիկ և ստանալիք), վորը հավասար լինի տրված ավանդների և գյուղացիներին փոխառություններ տալու համար վարկային հիմնարկներից վերցված փոխառության ընդհանուր գումարին:

Ի՞նչ է վերապահվում պարտապաններին, յեթե վերոհիշյալ պայմանը պահպանելու շնորհիվ ընկերությունն ի վիճակի չի լինում նրանց պրետենզիաներին բավարարություն տալու:

Այդպիսի դեպքում (պարտապաններին իրավունք է վերապահվում գործ հարուցել, Ընկերությունը՝ սնանկության պատճառով՝ լիկվիդացիայի յենթարկելու մասին):

Հոդվ. 129.— Ի՞նչ հերթականություն է ընդունվում այն դեպքում, յերբ պարտապանների պահանջների հանդեպ ընկերության կայքը չի բավարարում առաջադրված բոլոր պրետենզիաներին բավարարելու համար:

Պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.—

ա) Աշխատավորական պայմանագրերով Ընկերության կողմից վարձված բանվորների և ծառայողների պրետենզիաները, սոցիալական ապահովագրության պարտքը և հաշմանդամության ու մահվան դեպքերի առթիվ արված պահանջները:

բ) Ավանդները վերադարձնելու պահանջները:

գ) Այն փոխառություններից գոյացած պարտքը, վոր վերցված է վարկային հիմնարկներից գյուղացիներին, տնայնագործներին և արհեստավորներին փոխառություններ տալու համար (այստեղ չեն մտնում հիմնական և հատուկ զբամազլուխների համար Ընկերության կողմից վերցված փոխառությունները):

դ) Այն պրետենզիաները, վորոնք վոչ վերևում և վոչ ելներքեում չեն հիշված, ըստ վորում այս կարգի պրետենզիաների համար պահպանվում է ընդհանուր որենսդրությանը սահմանված հերթականությունը:

յե) Հիմնական և հատուկ կապիտալների համար Ընկերության կողմից վերցրած փոխառություններից գոյացած պարտքը:

զ) Փայերը վերադարձնելու պահանջները:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Հոդվ. 130.— Ի՞նչ դեպքերում ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը:

Ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը հետևյալ դեպքերում.—

ա) Յեթե անդամների ընդհանուր ժողովը համապատասխան վորոշում է կայացնում (ընկերության անդամների ցանկություն):

բ) Յեթե Ընկերության անդամների թիվը 50-ից պակասում է:

գ) Դատարանի վորոշման համաձայն՝ Ընկերությունը սնանկ հայտարարվելու դեպքում:

դ) Յերբ Ընկերությունը շեղվում է իր կանոնադրությունից կամ պետության շահերին հակառակ ընթացք է բռնում, որենքով հաստատված կարգով:

յե) Յեթե Ընկերության կրած ֆլստների հետևանքով, Ընկերության հիմնական զբամազլուխը կիսով չափ պակասում է:

Հոդվ. 131.— Ընկերության լուծարքի համար ի՞նչ ժամկետ է հաստատվում:

Լուծարքի ժամկետը մի տարուց ավելի պիտի չլինի:

Հոդվ. 132.— Ընկերության պարտքերը վճարելուց և փայերը վերադարձնելուց հետո մնացած կայքն ի՞նչ է արվում: Լուծարքի հանձնաժողովը մնացած կայքը հատկացնում է այն կոպերատիվ ու հասարակագուտ նպատակներին, վոր մասնանշում է ընդհանուր ժողովը:

Հոդվ. 133.— Ընկերության դադարման, լուծարքի հանձնաժողովի գործունեությունից համար Ընկերության բավարարելու կարգն ի՞նչով է վորոշվում:

Դրա վորոշվում է լուծարքի, միացման և անջատման դեպ-
քերում կոոպերատիվ կազմակերպութիւններէ գործունէութեան
դադարման կարգի մասին ԽՍՀ Միութեան կենտրոնական Գոր-
ծադիր կոմիտեյի և ժողովրդական կոմիսարներէ Խորհրդի 1927 թ.
հունիսի 15-ին հաստատած կանոնադրութեամբ և ՌՍՖՍՀ որենս-
դրութեամբ:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱ-
ԴՐՈՒԹՅԱՆ ՏՈՄԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

Պետք է՝ արդյոք տոմարագրել գյուղատնտեսական վար-
կային ընկերութեան կանոնադրութիւնը:

Յուրաքանչյուր գյուղատնտեսական վարկային ընկերու-
թեան կանոնադրութիւնը պետք է հաստատված կարգով տո-
մարագրվի:

Ընկերութեան կանոնադրութիւնը տոմարագրելու մասին
տրված ղիմումին քանի՞ հիմնադիրներէ ստորագրութիւնն է
պահանջվում:

Գյուղատնտեսական վարկային Ընկերութեան կանոնադրու-
թեան տոմարագրման մասին տրված ղիմումի տակ պիտի ստորա-
գրեն վոչ պակաս, քան հինգ հիմնադիրներ:

Տոմարագրման մասին տրված ղիմումին արդյոք պահանջ-
վում է կցել նաև մնացած հիմնադիրներէ ցուցակը:

Այո, հիմնադիրներէ ցուցակը կցելը պահանջվում է: Այդ
ցուցակի մեջ հիմնադիրները պիտի դնեն իրենց ստորագրու-
թիւնը:

Դիմումի վրա հիմնադիրներէ յեղած ստորագրութիւնն
արդյոք պիտի վավերացվի՞:

Հիմնադիրներէ ստորագրութիւնները պետք է վավերացը-
ված լինեն զավառային գործադիր կոմիտեյի կամ գյուղխորհրդի
կողմից՝ առանց նոտարական տուրք վերցնելու:

Դիմումի մեջ կարելի՞ յէ մատնանշել վորոշ անձնավորու-
թիւն, վորին հիմնադիրները լիազորում են հետեւել կանոնա-
դրութեան տոմարագրման գործին:

Կարելի յէ մատնանշել:

Այդպիսի լիազորութիւն կարելի՞ յէ տալ մի այնպիսի
անձնավորութեան, վորը չի պատկանում ընկերութեան հիմնա-
դիրներէ թվին:

Կարելի յէ տալ:

Ել ի՞նչ պիտի մատնանշվի տոմարագրման մասին տրված
ղիմումի մեջ:

Տոմարագրման մասին տրված ղիմումի մեջ պետք է մատ-
նանշվի այն անձնավորութիւնը, վորը լիազորվում է ստանալ
տոմարագրման վերաբերող թղթերը: Պետք է հիշվի նաև այդ
անձնավորութեան հասցեն:

Ընկերութեան կանոնադրութիւնից քանի՞ որինակ պետք է
ներկայացվի տոմարագրման մասին արած ղիմումի հետ:

Պետք է կանոնադրութեան չորս, իրար բոլորովին նման,
որինակ կցվի, վորոնց բոլորին էլ պիտի ստորագրած լինեն
Ընկերութեան հիմնադիրները:

Ել ի՞նչ է պահանջվում ներկայացնել տոմարագրման մա-
սին տրված ղիմումի հետ:

Պետք է ներկայացվի նաև զավառային գործկոմի կողմից
հաստատված մի տեղեկանք այն մասին, վոր Ընկերութեան հիմ-
նադիրները խորհուրդներէ ընտրութեան ձայնի իրավունք ունեն:
Գյուղատնտեսական վարկային ընկերութեան կանոնադրու-
թեան տոմարագրումն ի՞նչպէս է կատարվում:

Գյուղատնտեսական վարկային ընկերութեան կանոնադրու-
թեան տոմարագրումը կատարվում է կամ տեղական զավառական
Ֆինանսական բաժնուժ, յեթէ Ընկերութեան մեջ մտնում են գա-
վառի սահմաններից վոչ ավելի լայն տերրիտորիայի բնակչու-
թիւն, կամ էլ շրջանային ֆինանսական բաժնուժ, յեթէ Ընկե-
րութիւնն ընդգրկում է, շրջանացված վայրերում, շրջանի սահ-
մաններից վոչ ավելի լայն տերրիտորիայի բնակչութիւն:

Վո՞ր դեպքում կարող է մերժվել ընկերութեան կանոնա-
դրութեան տոմարագրումը:

Այն դեպքում, յերբ Ընկերութեան ներկայացրած կանոնա-
դրութիւնը չի համապատասխանում գործող որենքների պահանջ-
ներին: Այդ դեպքում հիմնադիրներն իրավունք ունեն պահանջել,
վոր կանոնադրութեան հաստատումը մերժող վորոշման մեջ ճըշ-
տվյալ կանոնադրութիւնը չի համապատասխանում ու բացա-
տրվի, թէ ինչձումն է կայանում այդ անհամապատասխանու-
թիւնը:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:

Ի՞նչ կարգով է հայտնվում ընկերութեան հիմնադիրներին,
թէ նրանց ներկայացրած կանոնադրութեան տոմարագրումը
մերժված է:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Երես
Նախնական տեղեկություններ	5
1. Ընդհանուր կանոններ	8
2. Ընկերության անդամները մասին	12
3. Ընկերության միջոցները	21
4. Ընկերության անտեսական գործունեությունը	31
<hr/>	
1. Վարչություն	45
2. Խորհուրդ	49
3. Ընդհանուր հոգված	53
4. Վերահսկիչ Հանձնաժողով	62
5. Ընկերության հաշվետվությունը	66
6. Ընկերության սլարտապաններին բավարարելու կարգը	70
7. Ընկերության գործունեության դադարումը	71
8. Գյուղատնտեսական վարկ, Ընկ. կանոնադրության տոմարագրման կարգը	72



